ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

«ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ»

15-17, դեկտեմբեր, 2011

ՈԱԱԿ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

The World Bank

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

«ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ»

15-17, դեկտեմբեր, 2011

ՈՎԱԿ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԳՐԱՄ

The World Bank

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ

Սույն ձեռնարկը ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգի» (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ) բաղկացուցիչ մասն է:

Ձեռնարկը պատրաստվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից (այսուհետ՝ ՈԱԱԿ): Ձեռնարկում մանրամասն նկարագրված են Հայաստանի մասնագիտական կրթության որակի ապահովման շրջանակը, մասնագիտական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ՄՈՒՀ) և մասնագիտության կրթական ծրագրերի պետական հավատարմագրման նպատակով իրականացվող արտաքին գնահատման գործընթացները, հիմնական ընթացակարգերը, դրանց տևողությունը, ինչպես նաև ՈԱԱԿ-ի, փորձագետների և ՄՈՒՀ-երի գործունեության շրջանակը:

Ձեռնարկի մշակման ընթացքում ՈԱԱԿ-ը հիմք է ընդունել հետևյալը.

- ՀՀ մասնագիտական կրթության համակարգի կարիքների գնահատումը և իրավիճակի վերլուծությունը,
- ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը, որի միջոցով ձևավորվում է մասնագիտական ուսումնական հաստատությունների վերաբերյալ տվյալների բազան,
- Որակի ապահովման ազգային համակարգի ձևավորման շրջանակում 2009-2011թթ. իրականացված փորձարկումների արդյունքները,

- Հայաստանի Հանրապետության և Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «ՀՀ Զարգացման քաղաքականության վարկի (ԶՔՎ)» երկրորդ ծրագրի՝ «Տեխնիկական աջակցություն (ՏԱ) բարձրագույն կրթության կառավարման համակարգի ամրապնդմանը. որակի հավաստում», շրջանակում ՈԱԱԿ-ի միջազգային փորձագետների երաշխավորությունները,
- ՈԱԱԿ-ի միջազգային փորձագետների երաշխավորությունները Տեմպուս (TEMPUS) դրամաշնորհային ծրագրերի՝ «Հաստատությունների ինքնագնահատման համակարգերի մշակում և ներդրում» (DIUS) և «Մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովման միջազգայնացման և համադրելիության խթանումը» (PICQA), շրջանակներում:

ՈԱԱԿ-ը վստահ է, որ իր շահակիցների ակտիվ ներգրավվածությամբ կապահովի սույն ձեռնարկի կիրառելիությունը, ինչը կնպաստի ՈԱԱԿ-ի առաքելության իրականացմանը՝ ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովմանը և հավատարմագրմանը, հետևաբար, որակավորումների ճանաչելիությանը ազգային և միջազգային մակարդակներում:

ՈԱԱԿ-ը շնորհակալություն է հայտնում փաստաթղթի մշակման գործընթացի բոլոր մասնակիցներին:

Ձեռնարկի կամ նրանում նկարագրված գործընթացների վերաբերյալ բոլոր հարցերը կարող են ուղղվել ՈԱԱԿ-ի գրասենյակ.

Էլ-փոստ՝ info @anqa.am,

հեռախոս՝ (+374-10) 229145,

(+374-10) 229146,

(+374-10) 229147,

ֆաքս՝ (+374-10) 229148:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 3
I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 9
1. Հայաստանյան մոտեցում 10
2. ՈԱԱԿ-ի առաքելությունը և ռազմավարական խնդիրները 12
3. Որակի ապահովման ՈԱԱԿ-ի սկզբունքները 15
4. ՈԱԱԿ-ի համագործակցությունը շահակիցների հետ 16
II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ 19
1. Որակի ապահովման համատեքստը 19
2. Որակի ապահովման շրջանակը 21
2.1 Որակի արտաքին ապահովումը 22
2.2 Որակի ներքին ապահովումը 26
2.3 ՈԱԱԿ-ի ճանաչումը 27
2.4 Տեղեկատվության ապահովումը 28
3. Հավատարմագրման պետական գրանցամատյան 28
III . ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 29
1. Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում 29
2. Դիմում-հայտ պետական հավատարմագրման համար 31
3. Ինքնավերլուծություն 32
4. Փորձագիտական խմբի ձևավորումը և կազմը 33
5. Փորձաքննություն (արտաքին գնահատում) 35
5.1 Փաստաթղթերի նախնական ուսումնասիրություն 36
5.2 *Փորձագիտական այց մասնագիտական ուսումնական հաստատություն* 38
5.3 Փորձագիտական զեկույցի պատրաստում 47
5.4 Դիմում-հայտը հետ վերցնելու գործընթաց 52
5.5 Որոշման կայացում 53
IV. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ 56
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ 56
1. Ենթակառուցվածքային հավատարմագրման չափանիշներ 57

1.1 Առաքելությունը եվ նպատակները 57
1.2 Կառավարումն ու վարչարարությունը 58
1.3 Մասնագիտության կրթական ծրագրերը 60
1.4 Ուսանողները 61
1.5 Պրոֆեսորադասախոսական եվ ուսումնաօժանդակ կազմը . 63
1.6 Հետազոտությունը եվ զարգացումը 64
1.7 Ենթակառուցվածքը եվ ռեսուրսները 65
1.8 Հասարակական պատասխանատվությունը 67
1.9 Արտաքին կապերը եվ միջազգայնացումը 68
1.10 Որակի ներքին ապահովման համակարգը 69
2. Մասնագիտական կրթական ծրագրի հավատարմագրման չափանիշներ 70
2.1 Մասնագիտության կրթական ծրագիրը 70
2.2 Դասախոսական կազմ 72
2.3 Դասավանդումը եվ ուսումնառությունը 73
2.4 Ուսանողների գնահատումը 73
2.5 Հետազոտական եվ ստեղծագործական գործունեությունը 74
2.6 Կրթական միջավայրը 75
2.7 Որակի ապահովումը 76
3. Մասնագիտական ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ կարողությունների կամ մասնագիտության կրթական ծրագրի կատարողականի գնահատում 77
V. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ, ՈՒՂԵՆԻՇՆԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ 79
1. Փորձագիտական խմբի ձևավորում 81
1.1 Փորձագիտական խմբի անդամների և համակարգողի պարտականությունները 87
2. Փորձագետների հատկանիշները 89
3. Փորձագետների հավաքագրում, ընտրություն 91
4. Փորձագետների կողմնորոշում/վերապատրաստումներ 92
4.1 Նախնական վերապատրաստում 93
4.2 Շարունակական վերապատրաստում 94

5. Փորձագիտական աշխատանքների մշտադիտարկում և գնահատում 95
5.1. Նախնական գնահատում 95
5.2 Շարունակական գնահատում և մշտադիտարկում 95
6. Շահերի բախում, գաղտնիություն և ազնվություն 97
VI. ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱԽՍԵՐ 99

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտական կրթության որակի ապահովման ներքին և արտաքին համակարգեր ստեղծելու պահանջն աճում է ամբողջ աշխարհում՝ որպես բնական արձագանք մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակի և դրանց հատկացվող հանրային ու մասնավոր ներդրումների արագ աճին: Բոլոնիայի հռչակագիրը ստորագրած բոլոր երկրների նախարարներն ընդգծել են Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում (EHEA) հավատարմագրման կամ որակի ապահովման այլ համակարգեր ներդնելու անհրաժեշտությունը («Բեռլինի կոմյունիկե», 2003թ.): Բոլոնիայի հռչակագիրը ստորագրած բոլոր երկրներում որակի արտաքին ապահովումը պարտադիր գործընթաց է դարձել: Եվրոպայի գրեթե բոլոր երկրներն արձագանքել են այս պայմանին՝ հիմնելով և կիրառելով այդպիսի համակարգեր, ինչը մասին վկայում է կառավարությունների պատրաստակամությունը ապահովել իրենց ՄՈՒՀ-երի և որակավորումների շնորհման որակը և փաստել դա:

«Բեռլինի կոմյունիկեն» կոչ է արել «Բարձրագույն կրթության (այսուհետ՝ ԲԿ) որակի ապահովման եվրոպական ասոցիացիային» (ԲԿՈԱԵԱ) իր բոլոր գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ մշակել որակի ապահովման չափորոշիչների, ընթացակարգերի և ուղենիշների համաձայնեցված մի փաթեթ, որն ավելի տրամաբանական կդարձնի որակի ապահովման համակարգը Եվրոպայում և դրանով կնպաստի ակադեմիական և մասնագիտական շարժունությանը: Արդյունքում՝ Բոլոնիայի հռչակագիրը ստորագրած երկրների կրթության նախարարները 2005թ. («Բեռլինի կոմյունիկե») սահմանեցին և ընդունեցին «Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներն

ու ուղենիշները» (այսուհետ՝ ՈԱԵՉՈՒ): ՈԱԵՉՈՒ-ն կառավարությունների, որակի ապահովման գործակալությունների և ԲԿ հաստատությունների համար կապահովի Որակի ապահովման ազգային համակարգեր մշակելու խորհրդատվություն և օժանդակություն: ՈԱԵՉՈՒ-ն զգալի չափով համադրելի է Որակի ապահովման գործակալությունների միջազգային ուղենիշների հետ, ուստի դրանք կիրառելի են դառնում ազգային և միջազգային մակարդակներում: Չնայած ՈԱԵՉՈՒ-ն պարտադիր բնույթ չի կրում, սակայն տրամադրում է միասնական կողմնորոշիչ շրջանակ, որն ուղղված է որակավորումների միջազգային ճանաչմանը: Այսօր ՈԱԵՉՈՒ-ի կատարումն անհրաժեշտ պայման է դարձել նաև ՈԱԳՑ-ին (ENQA) անդամակցելու և «Որակի ապահովման գործակալությունների եվրոպական գրանցամատյանում» (ՈԱԳԵԳ) գրանցվելու համար:

Մասնագիտական կրթության որակի ապահովումը նոր զարգացող ուղղություն է ՀՀ կրթության համակարգում, ինչը և ենթադրում է նորամուծություններ մասնագիտական կրթության քաղաքականության մեջ: Հետևաբար, ՈԱԱԿ-ը պարբերաբար վերամշակելու է սույն Զեռնարկում ներկայացված մոտեցումները՝ ազգային և միջազգային լավագույն փորձին համապատասխան:

1. Հայաստանյան մոտեցում

Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ) հիմնադրվել է ՀՀ կառավարության 2008թ. նոյեմբերի 27-ի թիվ 1486-Ն որոշմամբ: ՈԱԱԿ-ի նպատակն է աջակցել մասնագիտական ուսումնական հաստատություններին (այսուհետ՝ ՄՈՒՀ)՝ ստեղծելու կրթության որակի ապահովման մշակույթ՝ Հայաստանի օրենսդրությանը համապատասխան:

ՄՈՒՀ-երի խնդիրն է ստեղծել որակի ներքին ապահովման այնպիսի մեխանիզմներ, որոնք կապահովեն մատուցվող կրթության որակի համապատասխանությունը ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներին:Այդ չափանիշները ընդգրկում են ազգային պահանջները և մի շարք միջազգային փաստաթղթերով սահմանված երաշխավորություններ.

- «ԵՄ խորհրդի 1998 թ. սեպտեմբերի 24-ի՝ Բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտում եվրոպական համագործակցության վերաբերյալ հանձնարարական» (98/561/EC),
- «Եվրոպական բարձրագույն կրթության տարածք», Եվրոպայի կրթության նախարարների՝ Բոլոնիայում 1999թ. հունիսի 19-ին գումարված համաժողովի համատեղ հռչակագիր («Բոլոնիայի հռչակագիր»),
- «Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում Որակի ապահովման չափորոշիչներ և ուղենիշներ » (2005թ.),
- Որակի ապահովման գործընթացը կարգավորող փաստաթղթեր, որոնք 2009թ. օգոստոսից 2011թ. դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում իրականացված փորձարկումների ընթացքում տրամադրվել են ՈԱԱԿ-ին ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից՝ ի պատասխան ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարի:

Բոլոր ՄՈՒՀ-երը, անկախ իրենց ենթակայությունից և իրավակազմակերպական ձևից, պետք է առաջնորդվեն ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներով:

2. ՈԱԱԿ-ի առաքելությունը և ռազմավարական խնդիրները

ՈԱԱԿ-ը գործում է ՀՀ ԿԳ նախարարությունից և մասնագիտական ուսումնական հաստատություններից անկախ:

ՈԱԱԿ-ը նպաստում է հանրության վստահության ձևավորմանը, սոցիալական համախմբվածությանը, հավասարությանը, պատասխանատվությանը և մրցունակությանը մասնագիտական կրթական ծառայությունների որակի պարբերաբար բարելավման միջոցով:

ՈԱԱԿ-ն իրականացնում է իր առաքելությունը՝

- բավարարելով շահակիցների պահանջները պարտադիր ինստիտուցիոնալ և կամավորության սկզբունքով իրականացվող ծրագրային հավատարմագրման միջոցով,
- համաձայնեցնելով որակի ապահովման իր չափանիշները և չափորոշիչները ընդունված միջազգային չափանիշներին և չափորոշիչներին,
- երաշխավորելով միջազգային ճանաչելիությունը, ինչը կնպաստի Եվրոպայում ՀՀ մասնագիտական կրթության ամուր դիրքեր հաստատելուն,
- արժևորելով շահակիցների հետ սերտ համագործակցությունը որակի ապահովման համակարգի զարգացման գործում:

ՈԱԱԿ-ի որակի ապահովման մոտեցումներն արտացոլված են ՀՀ կառավարության կողմից հաստատված հավատարմագրման չափանիշներում, չափորոշիչներում և ընթացակարգերում: Այդ մոտեցումները կառուցված են հետևյալ հիմնական հասկացությունների վրա՝ հանրության վստահություն, սոցիալական համախմբվածություն, հավասարություն, հանրային պատասխանատվություն և մրցունակություն.

- ***Հանրության վստահություն.*** այն հիմնվում է ժողովրդավարական կառավարության ստեղծման և դրա հիմքում ընկած գաղափարի վրա, այն է՝ ժողովուրդն է իրական իշխանության կրողը, և նա է որոշում տվյալ հասարակության ապագան: Հետևաբար, ՈԱԱԿ-ը իր գործունեությամբ կերաշխավորի հանրության վստահությունը մասնագիտական կրթության հանդեպ:
- ***Սոցիալական համախմբվածություն.*** կրթության հիմնական խնդիրներից մեկը սոցիալականացումն է (այսինքն՝ ժողովրդավարական հասարակության նորմերի, արժեքների և սկզբունքների հանդեպ հարգանքի ձևավորումը), ինչը կերաշխավորի սոցիալական համախմբվածությունը: Այս առումով որակի ապահովման դերն է բարձրացնել հասարակության իրազեկվածությունը որակյալ կրթություն ստանալու իրենց իրավունքի վերաբերյալ, ինչը հատուկ է ժողովրդավարական հասարակություններին: Մասնավորապես, կայուն որակի ապահովման համակարգը կպաշտպանի հասարակությունը անորակ կրթությունից՝ մասնագիտական կրթական ծառայությունները դարձնելով թափանցիկ հանրության համար:
- ***Հավասարություն.*** Հայաստանի մասնագիտական կրթության ոլորտի շահակիցների նկատմամբ իր մոտեցմամբ ՈԱԱԿ-ը ջանում է ապահովել հավասար հնարավորություններ հասարակության բոլոր շերտերի համար: Օրինակ՝ ՈԱԱԿ-ը հավասար մոտեցում է ցուցաբերում պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների հանդեպ:
- ***Հանրային պատասխանատվություն.*** ՈԱԱԿ-ը, որպես կազմակերպություն, պարտավոր է ծառայել ի շահ հասարակությանը: ՈԱԱԿ-ը ձգտելու է իրականացնել իր առաքելությունը՝ ստեղծելով որակի ապահովման կայուն ու անկախ համակարգ, որը կպաշտպանի հասարակությանը անորակ կրթությունից՝ մասնագիտական

կրթական ծառայությունները դարձնելով թափանցիկ հասարակության համար:

- ***Մրցունակություն.*** ՈԱԱԿ-ը ձգտելու է ապահովել Հայաստանի մասնագիտական կրթության ճանաչելիությունը և մրցունակությունը միջազգային մակարդակում:

ՈԱԱԿ-ի ռազմավարական խնդիրներն են.

- Հավաստել ՄՈՒՀ-երի գործունեության և նրանց կողմից շնորհվող որակավորումների համապատասխանությունը հավատարմագրման չափանիշներին և մասնագիտական կրթական պետական չափորոշիչներին:
- Աջակցել մասնագիտական կրթության ծառայությունների որակի շարունակական բարելավմանը՝ համագործակցելով մասնագիտական կրթության շահակիցների հետ:
- Խթանել ՄՈՒՀ-երի նվիրվածությունը որակի ապահովման գործընթացին:
- Երաշխավորել ՄՈՒՀ-երի որակի վերաբերյալ թափանցիկ և ճշգրիտ տեղեկատվության հասանելիությունը հանրության համար:
- Նպաստել ազգային և միջազգային կրթական ծառայությունների մատուցման լավագույն փորձի տարածմանը:

ՈԱԱԿ-ը ամրագրում է, որ որակի ապահովման համակարգի ներդրումն ու պահպանումը ՄՈՒՀ-երի առաջնահերթ պարտավորությունն ու պատասխանատվությունն է: Քանի որ որակի ապահովման որևէ «ճշգրիտ մոդել» գոյություն չունի, ուստի յուրաքանչյուր ՄՈՒՀ, հիմք ընդունելով ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները և պետական կրթական չափորոշիչները, ինքը պետք է մշակի որակի ապահովման իր համակարգը:

3. Որակի ապահովման ՈԱԱԿ-ի սկզբունքները

ՈԱԱԿ-ը երաշխավորում է ուսումնական հաստատություններին մատուցվող ծառայությունների որակը և հուսալիությունը՝ ղեկավարվելով հետևյալ սկզբունքներով.

- ՈԱԱԿ-ի մատուցած ծառայությունները պետք է լինեն հասկանալի, թափանցիկ, պատշաճ կազմակերպված և ֆինանսապես արդյունավետ: ՈԱԱԿ-ն իր գործունեության համար հաշվետու է հանրությանը:
- ՈԱԱԿ-ի չափանիշները պետք է հստակ համապատասխանեն որակի ապահովման նպատակին և պարզ ու հասանելի լինեն հանրությանը:
- ՈԱԱԿ-ի մատուցած ծառայությունները պետք է լինեն վավեր, հուսալի և գործնական, իսկ որոշումների կայացումը պետք է կատարվի ըստ սահմանված չափանիշների:
- ՈԱԱԿ-ը պատասխանատվություն է կրում կրթության որակի գնահատման գործընթացների հավաստիության համար, իսկ ՄՈՒՀ-ը՝ կրթության որակի համար:
- ՈԱԱԿ-ի ծառայությունները պետք է հասանելի լինեն մասնագիտական ուսումնական բոլոր հաստատություններին:
- ՈԱԱԿ-ի ծառայությունները միտված են պաշտպանելու ուսումնառողներին ցածրորակ կրթական ծառայություններից ու արդյունքներից և չպետք է բացասաբար անդրադառնան նրանց վրա:

ՈԱԱԿ-ը որդեգրել է բաց և թափանցիկ գործելաոճ քննարկումների և առաջարկությունների համար, քանի որ հարցը վերաբերում է քաղաքականության և ընթացակարգերի բարելավմանը: ՈԱԱԿ-ի շահակիցները կարող են ակտիվորեն մասնակցել որակի

ապահովման շրջանակի մշակմանը, բայց ոչ մի դեպքում իրավասու չեն միջամտելու հավատարմագրման, գնահատման կամ որոշումների ընդունման գործընթացներին, որտեղ ՈԱԱԿ-ը կիրառելու է խիստ կանոնակարգումներ: Բարելավումները կատարվելու են միայն յուրաքանչյուր գործընթացի ամբողջական ավարտից հետո:

4. ՈԱԱԿ-ի համագործակցությունը շահակիցների հետ

ՈԱԱԿ-ի քաղաքականությունը ենթադրում է շահակիցների հետ համագործակցության երկու մակարդակ՝ շահակիցների կարիքների պարբերական ուսումնասիրություն և դրանց բավարարմանն ուղղված գործունեություն: Շահակիցներին ավելի լավ ծառայելու նպատակով ՈԱԱԿ-ը առանձնացրել է իր շահակիցների խմբերը և սահմանել հարաբերությունների մակարդակը նրանց հետ:

Շահակիցներ	**Հարաբերություններ**
Մասնագիտական ուսումնական հաստատություններ	ՄՈՒՀ-երին իրենց ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման գործընթացում աջակցելու նպատակով ՈԱԱԿ-ը աշխատելու է ոչ միայն պրոֆեսորադասախոսական կազմի և որակի պատասխանատուների հետ, այլև անմիջապես ուսումնական հաստատությունների հետ:
Ռեկտորների/տնօրենների խորհուրդ	ՈԱԱԿ-ը պարբերաբար կոնֆերանսներ և աշխատաժողովներ է կազմակերպելու ռեկտորների/տնօրենների խորհրդի հետ՝ հավաստելու ՄՈՒՀ-երի ղեկավարների համաձայնությունը որակի ապահովման կարևորության

	վերաբերյալ:
Գործատուներ	Գործատուները պետք է դառնան ՈԱԱԿ-ի շահակիցները, չնայած ներկայումս նրանց կողմից ակտիվություն չի նկատվում: ՈԱԱԿ-ը կձեռնարկի գործողություններ՝ որակի ապահովման գործընթացում Գործատուների միության, ինչպես նաև անհատ ձեռներեցների ներգրավվածությունը ակտիվացնելու համար:
Մասնագիտական միավորումներ	Այս միավորումները որոշակի բնագավառներում հստակ ձևավորված չեն կամ էլ ակտիվ ներգրավված չեն մասնագիտական կրթության ոլորտում: ՈԱԱԿ-ը քայլեր կձեռնարկի մասնագիտական միություններին որակի ապահովման գործընթացում ավելի ակտիվ ներգրավելու ուղղությամբ:
Կառավարություն	ՈԱԱԿ-ը համագործակցում է Կառավարության հետ որակի ապահովման շրջանակի մշակման հարցում, ինչը ենթադրում է մասնագիտական կրթության որակի ապահովման քաղաքականության մշակում:
Ուսումնառողներ	ՈԱԱԿ-ը համագործակցում է ուսանողների հետ տարբեր մակարդակներում (ուսանողական միություններ, ուսանողական ցանցեր, անհատ ուսանողներ): ՈԱԱԿ-ի կողմից կիրառվող հիմնական մեխանիզմը ուսանողական ցանցերի հետ ՈԱԱԿ-ի «Ուսանողության

	ձայն» ծրագրի համագործակցությունն է, որի միջոցով ուսումնասիրվում են ուսուցման և ուսումնառության հետ կապված խնդիրների վերաբերյալ ուսանողների մոտեցումները:
Պրոֆեսորադասա-խոսական կազմ	ՈԱԱԿ-ն ուղղակիորեն համագործակցում է պրոֆեսորադասախոսական կազմի հետ իր կողմից պարբերաբար կազմակերպվող հան-դիպումների, աշխատաժողովների, կոնֆե-րանսների և աշխատաժողովների շրջանակ-ներում:
Վարչական աշխատակազմ	ՈԱԱԿ-ն ուղղակիորեն համագործակցում է ՄՈՒՀ-երի վարչական աշխատակիցների հետ իր կողմից պարբերաբար կազմակերպվող հանդիպումների, կոնֆերանսների և աշխա-տաժողովների շրջանակներում:

ՈԱԱԿ-ը ձգտում է ձևավորել և իրականացնել որակի ապահով-ման իր ընթացակարգերը՝ կազմակերպելով խորհրդակցություններ և քննարկումներ շահակիցների հետ:

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

1. Որակի ապահովման համատեքստը

ՈԱԱԿ-ը ներկայացնում է որակի մի սահմանում, որը բնութագրում է որակը որպես համապատասխանություն հայտարարված նպատակներին: Համաձայն այս մոտեցման՝ ՈԱԱԿ-ը պետք է որոշի, թե որքանով են կրթական ծառայությունները կամ կրթության արդյունքները համապատասխանում սահմանված նպատակներին: Նման սահմանումը թույլ է տալիս հաստատություններին իրենց որդեգրած առաքելության մեջ ներկայացնել նպատակներ, որոնց հասնելու աստիճանով է գնահատվելու և ներկայացվելու որակը: ՈԱԱԿ-ը առաջին հերթին հատուկ ուշադրություն է դարձնելու նպատակների համարժեքությանը հասարակության պահանջներին և ՀՀ կառավարության կողմից հաստատված չափանիշներին ու գերակա ուղղություններին: Այս մոտեցումը ենթադրում է, որ, առաջին հերթին, պետք է սահմանվեն բարձրագույն կրթության գաղափարները և նպատակները. կրթության արդյունքները և ծառայությունները պետք է բավարարեն շահակիցների կարիքները և ցանկությունները: Այն նաև ենթադրում է, որ շահակիցն պետք է հստակ արտահայտի իր կարիքներն ու ցանկությունները: Բարձրագույն կրթության նպատակները հատատության առաքելության մեջ են ընդհանրացված, իսկ ավելի կոնկրետ են ակադեմիական մակարդակում՝ մասնագիտության կրթական ծրագրի նպատակների և ակնկալվող ուսումնառության արդյունքների մեջ: Այլ կերպ ասած, ուսումնական հաստատությունը ներկայացնում է իր անելիքները, իրականացնում է դրանք և ապացուցում / հիմնավորում է դա երրորդ մարմնին:

Մասնագիտական կրթության որակը սերտորեն կապված է դասավանդման արդյունավետության և գործունակության հետ: Արդյունավետությունը կապված է դասընթացի խնդիրների իրականացման, իսկ գործունակությունը՝ խնդիրների իրականացման համար կիրառվող ռեսուրսների հետ: Նպատակների համապատասխանությունը չափելիս ՈԱԱԿ-ը հատուկ ուշադրություն է դարձնելու տվյալ նպատակի համապատասխանությանը պետական կրթական չափորոշիչներին, հասարակության պահանջներին ու գերակա ուղղություններին և վերլուծելու է, թե որքանով են դրանք իրականացվել:

Մասնագիտական կրթության որակի ապահովումը գործընթաց է, որը միտված է որակի պահպանմանն ու բարձրացմանը՝ երաշխավորելով մասնագիտական կրթական չափորոշիչների և որակի բարելավումը՝ մասնագիտական կրթությունը ուսանողների, գործատուների և ամբողջ հասարակության կարիքներին համապատասխանեցնելու համար:

Որպես կանոն՝ Հայաստանում մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգը ներառում է գործողությունների երկու մակարդակ՝

- **«Քաղաքական» մակարդակ:** Այս մակարդակում կրթության ոլորտի շահակիցները մասնակցում են հավատարմագրման չափանիշների մշակման և պարբերաբար վերանայման գործընթացներին, ինչպես նաև հետագա քննարկումներին՝ այդ չափանիշները մեկնաբանելու վերաբերյալ: Հայաստանի դեպքում այս քննարկումների համակարգողը ՈԱԱԿ-ն է, որը ծառայում է որպես կենտրոնական «հարթակ» ՀՀ մասնագիտական կրթության շահակիցների շփման համար:
- **«Ընթացակարգային» մակարդակ:** Այս մակարդակում պետք է երաշխավորվի որակի ապահովման կազմակերպության լիարժեք անկախությունը հավատարմագրման յուրաքանչյուր գործընթացում:

Եթե Կառավարությունը կամ այլ շահագրգիռ կողմ անհրաժեշտ է համարում փոփոխություններ կատարել հավատարմագրման կարգի կամ չափանիշների մեջ, ապա դա կարելի է անել միայն որակի ապահովման շրջանակի մշակման մակարդակում: Չափանիշները կարող են փոխվել արդեն իսկ սկսված հավատարմագրման գործընթացի ընթացքում, սակայն, որպես կանոն, այդ փոփոխությունը չի կարող հետադարձ ուժ ունենալ գործընթացին մասնակցող ուսումնական հաստատության վրա, եթե իրավական ակտով այլ բան սահմանված չէ:

ՀՀ-ում կրթության որակի ապահովումը պարտադիր գործընթաց է բոլոր ՄՈՒՀ-երի համար՝ անկախ դրանց կազմակերպաիրավական ձևից: Այն բաղկացած է երկու հիմնական բաղադրիչներից՝

- ՄՈՒՀ-երի որակի ներքին ապահովում, որը ՄՈՒՀ-ի պատասխանատվությունն է.
- ՄՈՒՀ-երի որակի արտաքին ապահովում, որն իրականացվում է պետության կողմից լիազորված «Որակի ապահովման անկախ կազմակերպության»՝ ՈԱԱԿ-ի կողմից:

2. Որակի ապահովման շրջանակը

Հայաստանի մասնագիտական կրթության որակի ապահովման համար ՈԱԱԿ-ը մշակել է որակի ապահովման ամբողջական շրջանակ, որն ընդգրկում է չորս գործընթաց.

- ՄՈՒՀ-երի որակի արտաքին ապահովում
- ՄՈՒՀ-երի որակի ներքին ապահովում
- ՈԱԱԿ-ի ճանաչում միջազգային կազմակերպությունների կողմից
- Տեղեկատվության ապահովում:

2.1 Որակի արտաքին ապահովումը

Որակի արտաքին ապահովման գործընթացներն ունեն երեք հիմնական նպատակ.

- **Հաշվետվողականություն և թափանցիկություն:** Որակի ապահովման գործընթացները երաշխավորում են, որ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և պետական կրթական չափորոշիչների ապահովման դեպքում հասարակության շահերը պաշտպանված կլինեն, ինչպես նաև հրապարակային են դարձնում առանձին ՄՈՒՀ-երի կրթական ծառայությունների որակը երկրի ներսում և նրա սահմաններից դուրս:
- **Վերահսկում:** Հաստատությունը ոչ միայն վերահսկում է ռեսուրսների ծախսը, այլև ցույց տալիս, որ առկա ռեսուրսները արդյունավետ օգտագործելով՝ հասնում է հնարավորինս բարձր որակի:
- **Որակի բարելավում:** Հաստատությունը քննարկումներ և վերլուծություններ է ձեռնարկում որակի ապահովման գործընթացի արդյունավետության, որակի մշակույթի ձևավորման և շարունակական զարգացման նպատակով:

Ընդհանուր առմամբ, որակի արտաքին ապահովման նպատակն է հավաստել, որ ՄՈՒՀ-երը հետամուտ են հետևյալ հարցերի պատասխաններին՝

- Արդյո՞ք ՄՈՒՀ-ն ունի որոշակի մշակույթ ձևավորող ընթացակարգեր, որոնք գործում են հաստատության բոլոր օղակներում և կրթական բոլոր ծրագրերի իրականացման ընթացքում.
- Արդյո՞ք ՄՈՒՀ-ը պարբերաբար մշտադիտարկում է որակական նպատակներին հասնելու իր առաջընթացը, մասնավորապես, կրթական ծառայությունների որակի պահպանումն ու հետագա բարելավումը.

- Արդյո՞ք որակի ապահովման ընթացակարգերի տվյալներն օգտագործվում են կրթական և վերապատրաստման ծառայությունների որակը բարձրացնելու և սովորողների կարիքներին համապատասխանեցնելու նպատակով.
- Արդյո՞ք ՄՈՒՀ-ը մշտադիտարկում են սովորողներին տրամադրվող ծառայությունների արդյունավետությունը.
- Արդյո՞ք ձեռնարկվում են համապատասխան գործողություններ, որոնք կշտկեն որակի ապահովման գործընթացում հայտնաբերված բացթողումները.
- Արդյո՞ք շահակիցներին տրամադրվում է հաստատության և մասնագիտությունների կրթական ծրագրերի որակի վերաբերյալ համարժեք տեղեկատվություն:

ՈԱԱԿ-ի որակի ապահովման ընթացակարգերի մշակման, պահպանման և իրագործման ընթացքում կարևոր է հասկանալ, որ այն չի կարող սահմանափակվել միայն հեշտ չափելի քանակական տվյալներով, քանի որ դա կարող է ուշադրությունը շեղել որակի ապահովման գործընթացի այլ կարևոր ասպեկտներից, որոնք չափվում են որակական մոտեցումների միջոցով:

ՈԱԱԿ-ը ՄՈՒՀ-երի որակի ապահովման արդյունավետությունը դիտարկելու է շրջափուլային եղանակով: Նման դիտարկումների արդյունքները հանրությանը հասանելի կլինեն: Դրանց հրապարակումը կարևոր է՝ ձեռք բերելու հանրության վստահությունը՝ որակը վերահսկելու և կառավարելու վերաբերյալ: Այս գործընթացում ՈԱԱԿ-ը ակնկալում է բոլոր շահակիցների մասնակցությունը:

ՀՀ որակի արտաքին ապահովումն իրականացվում է պետական հավատարմագրման հետևյալ երկու գործընթացներով.

Ենթակառուցվածքային /Ինստիտուցիոնալ/ հավատարմագրում: Պետության կողմից ուսումնական հաստատության կրթական և որակի ապահովման գործընթացների, մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ պետական կրթական չափորոշիչներին և ենթակառուցվածքային հավատարմագրման չափանիշներին համապատասխանության ճանաչումն է: Այն պարբերաբար իրականացվող պարտադիր գործընթաց է մասնագիտական ուսումնական բոլոր հաստատությունների համար: Այս գործընթացը թույլ է տալիս պարբերաբար գնահատել ՄՈՒՀ-ի գործունեության արդյունավետությունը, ինչպես նաև տեսնել, թե արդյոք այն իրականացնում է իր առաքելությունը:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը նախապայման է ծրագրային հավատարմագրման համար:

Մասնագիտության կրթական ծրագրի /Ծրագրային/ հավատարմագրում: Իրականացվում է ՄՈՒՀ-ի նախաձեռնությամբ կամավորության սկզբունքով, բացառությամբ բժշկական մասնագիտությունների կրթական ծրագրերի: Ծրագրային հավատարմագրումը պետության կողմից մասնագիտության կրթական ծրագրի, մասնագետների պատրաստման որակի՝ պետական կրթական չափորոշիչներին և ծրագրային հավատարմագրման չափանիշներին համապատասխանության ճանաչումն է: Ծրագրային հավատարմագրման թիրախն առանձին մասնագիտության կրթական ծրագիրն է, այլ ոչ թե ուսումնական հաստատությունն ամբողջությամբ: Այս գործընթացը թույլ է տալիս պարբերաբար գնահատել մասնագիտության կրթական ծրագրի արդյունավետությունը, ինչպես նաև ստուգել, թե արդյոք այն ապահովում է ուսումնառության արդյունքների ձեռքբերումը ակնկալվող ամբողջ ծավալով: Մասնագիտության կրթական ծրագրի հավատարմագրումը ունենում է երկու հիմնական հետևանք.

- մասնագիտությունը ստանում է հավատարմագրվածի կարգավիճակ, շնորհված որակավորումը և կրեդիտները ճանաչվում են ազգային մակարդակում, և երաշխավորվում է կրեդիտների ճանաչումը միջազգային մակարդակում, ինչը նպաստում է ծրագրի միջազգայնացմանը և ուսանողների շարժունությանը,
- ծրագրային հավատարմագրումը պետական ֆինանսական միջոցների տրամադրման հիմնական պարտադիր նախապայմաններից մեկն է:

2.1.1. ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողով

ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովը պատասխանատու է.

- փորձագիտական գնահատման արդյունքների հիման վրա ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրման մասին որոշում կայացնելու համար,
- ՈԱԱԿ-ի հավատարմագրման գործընթացների և մեթոդաբանության որակն ապահովելու համար:

Հավատարմագրման հանձնաժողովի կազմը և մասնագիտական կրթության գլխավոր շահակիցների, ինչպես նաև հասարակության կողմից նրա ճանաչելիությունը հանդիսանում են Հայաստանի հավատարմագրման համակարգի հաջողության կարևորագույն տարրերը և գրավականը:

Հավատարմագրման հանձնաժողովն անկախ, կոլեգիալ, մշտական գործող մարմին է, որն իրականացնում է «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ով սահմանված լիազորությունները:

Հավատարմագրման հանձնաժողովը իր գործունեությունն իրականացնում է օրինականության և անկախության սկզբունքների հիման վրա՝ առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 978-Ն և «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959-Ն որոշումներով, պետական կրթական չափորոշիչներով, ՈԱԱԿ-ի կանոնադրությամբ, «Հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգ»-ով և այլ իրավական ակտերով:

Հավատարմագրման հանձնաժողովը ձևավորվում է ընտրության հստակ ընթացակարգով, ինչը և երաշխավորում է նրա գործառույթների օրինականությունը:

Հավատարմագրման հանձնաժողովը որոշումները կայացնում է անդամների ***բաց քվեարկության*** միջոցով:

2.2 Որակի ներքին ապահովումը

ՄՈՒՀ-երի որակի ներքին ապահովումը Հայաստանի մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգի հիմնական տարրերից է: Որակի ներքին ապահովման գործընթացներն ուսումնական հաստատության գործունեության մաս պետք է կազմեն:

Որակի շարունակական բարելավումն ընդգրկում է երեք հիմնական գործողություն՝ նպատակների և հավատարմագրման չափանիշների սահմանում, գործունեության գնահատում՝ ըստ այդ չափանիշների, և հետագա գործունեության բարելավում: Դա ձևավորում է որակի կառավարման շարժիչ սկզբունքը՝ պլանավորում, իրականացում,

ստուգում և բարելավում՝ գործընթաց, որի միջոցով ՄՈՒՀ-ն իր և իր շահակիցների համար հաստատում է, որ հնարավորինս բարձր արդյունքների է հասել իր գործունեության բոլոր ոլորտներում:

Հաշվետվողականության համատեքստում որակի ապահովումը գործածվում է որպես մշտադիտարկումներ կատարելու մեխանիզմ: Սովորողները, շրջանավարտները, գործատուները և հասարակությունը բարձր որակ են ակնկալում ուսումնական հաստատություններից: Որակի ապահովումը կարևորագույն գործիք է ՄՈՒՀ-ի կրթական գործունեության համար, որը երաշխավորում է ոչ միայն հասարակության պահանջների և կարիքների բավարարումը, այլև ՄՈՒՀ-ի անկախությունը և ինքնավարությունը: ՄՈՒՀ-ի հաշվետվողականությունը և թափանցիկությունը երաշխավորելու համար անհրաժեշտ է որակի ներքին ապահովման ռազմավարության և ընթացակարգերի արտաքին գնահատում:

Հավատարմագրման չափանիշներով սահմանված մակարդակին հասնելու համար ՄՈՒՀ-ի գործունեության բոլոր ոլորտներում և գործառույթներում պահանջվում է տեղեկատվական հոսքերի պարզեցում և ընթացակարգերի թափանցիկություն: ՄՈՒՀ-ի առաքելությունը և կանոնակարգող համապատասխան բոլոր փաստաթղթերը պետք է լինեն հրապարակված և հասանելի դասախոսների, ուսանողների ու բոլոր շահակիցների համար:

2.3 ՈԱԱԿ-ի ճանաչումը

ՈԱԱԿ-ի կողմից մատուցվող որակի ապահովման ծառայությունների՝ միջազգային մակարդակում պատշաճությունն ու ճանաչումը երաշխավորելու համար ՈԱԱԿ-ը միջազգային գործակալությունների կողմից պարբերաբար ենթարկվելու է եվրոպական չափանիշներին և

չափորոշիչներին համապատասխանող արտաքին փորձաքննության: ՈԱԱԿ-ի ակտիվ գործունեության առաջին երկու տարիներից հետո՝ 2014թ. ՀՀ կրթության և գիտության նախարարությունը պետք է նախաձեռնի ՈԱԱԿ-ի ճանաչման գործընթացը՝ միջազգային կազմակերպությունների ներգրավմամբ:

2.4 Տեղեկատվության ապահովումը

Հայաստանի մասնագիտական կրթության վերաբերյալ տեղեկատվությունը պետք է դառնա հանրությանը հասանելի: Դա կապահովի կրթական ծառայությունների թափանցիկությունը:

3. Հավատարմագրման պետական գրանցամատյան

Իրականացված հավատարմագրման արդյունքները հանրությանը հասանելի դարձնելու նպատակով ՈԱԱԿ-ը մշակել է հավատարմագրման պետական գրանցամատյան: Որպես որակի ապահովման միակ կազմակերպություն՝ հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցումներ և փոփոխություններ կատարելու իրավասությունը ՀՀ կառավարության կողմից տրված է միայն ՈԱԱԿ-ին, ինչը Կառավարությունը հաշվի է առնում որոշումների կայացման ընթացքում:

Մասնագիտական ուսումնական հաստատությանը իրավունք է վերապահվում հավատարմագրվել միջազգային որակի ապահովման մեկ այլ կենտրոնի կողմից: Այդ գործընթացի արդյունքները ճանաչելի են դառնում ՀՀ-ում միայն ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի համաձայնության դեպքում:

III . ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

1. Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում

Հավատարմագրումը մասնագիտական ուսումնական հաստատությունների և կրթական ծրագրերի արտադրողականության, որակի և ազնվության ճանաչման գործընթաց է, որը ապահովում է կրթական համայնքի և հասարակության վստահությունը: Հավատարմագրումը ենթադրում է, որ հաստատությունը պահպանում է այն չափանիշները, որոնք անհրաժեշտ են իր շրջանավարտներին այլ հեղինակավոր բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու համար կամ իրավունք է վերապահում զբաղվելու մասնագիտական գործունեությամբ: Հավատարմագրումը տրվում է որոշակի ժամկետով՝ երաշխավորությամբ, որ ուսումնական հաստատությունը կամ կրթական ծրագիրն ունեն անհրաժեշտ կարողություն տվյալ ժամանակահատվածում կրթական գործունեություն իրականացնելու համար:

«Հավատարմագրում» եզրույթը բարձրագույն կրթության ոլորտում վերաբերում է երրորդ կողմի տրամադրած վկայականի (կամ կնիքի) ձեռքբերմանը, ինչը վկայում է հավատարմագրման սահմանված չափանիշներին համապատասխանելու մասին: Հավատարմագրումը հիմնվում է որակի արտաքին գնահատման գործընթացի վրա:

Մասնագիտական կրթության հավատարմագրման հիմնական նպատակն է հավաստել ՄՈՒՀ-երին, ուսանողներին, նրանց ծնողներին, գործատուներին և շահագրգիռ հասարակությանը, որ մասնագիտական կրթության որակը ճանաչելի է պետության կողմից: Այս առումով, կարևոր սկզբունք է հավատարմագրման մասին որոշում կայացնող կառույցի անկախությունը: ՈԱԱԿ-ի խնդիրն է հավատար-

մագրման մասին որոշման կայացման գործընթացն ապահովագրել հավատարմագրող կառույցի առանձին անդամների ազդեցությունից: Ավելին, հավատարմագրման գործընթացի թափանցիկությունը, համադրելիությունը, ինչպես նաև օրենսդրական հիմքերն անհրաժեշտ գործոններ են մասնագիտական կրթության ոլորտի հանդեպ հասարակության վստահության ձևավորման համար:

ՈԱԱԿ-ի պարտականություններն են՝ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և ընթացակարգերի թարմացման և լրամշակման վերաբերյալ ՀՀ կառավարություն առաջարկություններ ներկայացնելը, ՄՈՒՀ-երի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացներ իրականացնելը, պետական կրթական չափորոշիչների և մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների պահանջներին բավարարող հաստատությունների և մասնագիտությունների կրթական ծրագրերի ցանկը սահմանելը:

Հայաստանի մասնագիտական կրթության ոլորտում պետական հավատարմագրման գործընթացն ունի մի շարք կարևոր գործառույթներ, ներառյալ կրթական գործընթացի արդյունավետությանն ուղղված քայլերի խրախուսումը: Հավատարմագրման գործընթացը պահանջում է, որ հաստատություններն մանրամասն ուսումնասիրեն իրենց առաքելությունը, նպատակները, գործընթացները և ձեռքբերումները ինքնավերլուծության գործընթացի միջոցով: Այնուհետև կատարվում է փորձագիտական վերլուծություն փորձագետների կողմից, ինչից հետո տրամադրվում են ձեռքբերումների մասին վկայություններ և խորհրդատվություն բարելավման համար: Քանի որ հաստատության և կրթական ծրագրի հավատարմագրման կարգավիճակը պարբերաբար վերանայվում է, հաստատությունները պետք է պար-

բերաբար իրականացնեն ինքնավերլուծության և բարելավման շարունակական գործընթացներ:

Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացներն իրականացվում են երեք հաջորդական փուլերով՝

- ***Առաջին փուլ.*** ուսումնական հաստատության ինքնավերլուծություն.
- ***Երկրորդ փուլ.*** արտաքին գնահատում անկախ փորձագետների խմբի կողմից.
- ***Երրորդ փուլ.*** վերջնական փորձագիտական զեկույցի պատրաստում և որոշման կայացում ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի կողմից:

2. Դիմում-հայտ պետական հավատարմագրման համար

ՈԱԱԿ-ը հավատարմագրման ***դիմում-հայտերն*** ընդունում է ամբողջ տարվա ընթացքում: Դիմում-հայտի ընդունման գործընթացը կարգավորվում է հավատարմագրման կարգում սահմանված ընթացակարգերով: Ներկայացվող պահանջներին համապատասխանելու դեպքում ՈԱԱԿ-ը ընդունում է դիմում-հայտը, և ՄՈՒՀ-ի ու ՈԱԱԿ-ի միջև կնքվում է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր:

Ուսումնական հաստատությունը նշանակում է ***կոնտակտային անձ՝*** կազմակերպչական և տեխնիկական հարցերի կարգավորման համար: Կոնտակտային անձն ունի երկու հիմնական գործառույթ՝ օժանդակել գնահատման գործընթացին և համագործակցել ՈԱԱԿ-ի հետ:

3. Ինքնավերլուծություն

ՄՈՒՀ-ը յուրաքանչյուր տարի պետք է իրականացնի ***ինստիտուցիոնալ ինքնավերլուծություն և ծրագրային ինքնավերլուծություն*** բոլոր մասնագիտությունների համար: Այս գործընթացը հնարավորություն է տալիս քննադատաբար վերանայելու պլանավորված գործողությունները, վերլուծելու արդյունքները, հայտնաբերելու խնդիրները և բարելավման ենթակա ոլորտները: Հիմնվելով ինքնավերլուծության արդյունքների վրա՝ պետք է համապատասխանաբար վերանայվեն կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերը, ձեռնարկվեն համապատասխան միջոցներ, ինչպես նաև իրականացվի ռեսուրսների բաշխում գործընթացների իրականացման հետագա բարելավման նպատակով:

Պետական հավատարմագրման գործընթացին մասնակցելու համար ՄՈՒՀ-ը պետք է իրականացնի վերջին հինգ տարվա իր գործունեության ինքնավերլուծությունը:

Ինստիտուցիոնալ և Ծրագրային հավատարմագրման շրջանակներում ՄՈՒՀ-ը պետք է իրականացնի համապատասխանաբար ինստիտուցիոնալ կարողությունների և ուսումնասիրվող մասնագիտության կրթական ծրագրի ներքին գնահատում՝ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959 – Ն որոշմամբ հաստատված «Մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների»:

Ինքնավերլուծության գործընթացին նպաստելու համար ՈԱԱԿ-ը մշակել է մի շարք ուղենիշներ, ներառյալ՝

- ինստիտուցիոնալ և ծրագրային ինքնավերլուծության ձևաչափեր, որոնք Հավատարմագրման կարգի բաղկացուցիչ մասն են,

- ինքնավերլուծության ուղեցույց:

ՈԱԱԿ-ը որոշում է կայացնում ինքնավերլուծության ընդունման կամ մերժման մասին՝ Հավատարմագրման կարգով սահմանված ընթացակարգերի համաձայն:

4. Փորձագիտական խմբի ձևավորումը և կազմը

ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների կամ մասնագիտության կրթական ծրագրի արտաքին գնահատման գործընթացի իրականացման համար ՈԱԱԿ-ը փորձագետների իր բազայից ընտրում (http://experts.anqa.am) և ձևավորում է փորձագիտական խումբ՝ ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի հաստատած «*Փորձագիտական խմբի ձևավորման կարգ*»-ի պահանջներին համապատասխան:

Փորձագիտական խմբի անդամներից մեկը ՈԱԱԿ-ի կողմից նշանակվում է խմբի ղեկավար: Վերջինս կազմակերպում, ղեկավարում և պատասխանատվություն է կրում փորձաքննության ողջ գործընթացի անցկացման և փորձագիտական խմբի աշխատանքների, բոլոր հանդիպումների ղեկավարման, որոշակի գործողությունների պլանավորման և սույն ձեռնարկում սահմանված ուղենիշներին հետևելու համար: Խմբի ղեկավարի կարգավիճակը և բոլոր պարտականությունները սահմանված են «*Փորձագիտական խմբի ձևավորման կարգ*»-ով:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգելու և ամբողջ գործընթացի պլանավորմանն ու իրականացմանը աջակցելու նպատակով ՈԱԱԿ-ի աշխատակիցներից մեկը, տնօրենի հրամանով, նշանակվում է որպես փորձագիտական խմբի ***համակարգող***: Համակարգողը պատասխանատու է Հավատարմագրման կարգում և սույն

ձեռնարկում սահմանված ընթացակարգերի (ինքնավերլուծության ընդունում, վերջնական զեկույցի պատրաստում) իրականացմանը ճշգրիտ և ժամանակին աջակցելու համար: Համակարգողը փորձագիտական խմբի անդամ չէ և չի մասնակցում գնահատման գործընթացին:

Համակարգողի պարտականությունների շրջանակը սահմանվում է սույն ձեռնարկով:

Փորձագիտական խմբի ձևավորման քայլերից մեկը ուսումնական հաստատության հետ փորձագիտական խմբի նախնական կազմի համաձայնեցումն է: Այս նպատակով ՈԱԱԿ-ը փորձագետների նախնական ցանկը ուղարկում է ՄՈՒՀ: Ուսումնական հաստատությունը գրավոր հավաստում է իր համաձայնությունը: Փորձագիտական խմբի անդամներից մեկի կամ մի քանիսի թեկնածությունների վերաբերյալ առարկությունների դեպքում ուսումնական հաստատությունը ներկայացնում է հիմնավորված գրավոր բացարկ:

Փորձագետի մերժման հիմնավորումը մանրամասն ուսումնասիրելուց հետո ՈԱԱԿ-ը կատարում է համապատասխան փոփոխություններ փորձագիտական խմբի կազմում և վերջնական ցանկը ներկայացնում է ՄՈՒՀ-ին հաստատման համար: Փորձագիտական խմբի վերջնական կազմը հաստատվում է ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Ընդհանուր բանակցային գործընթացը կարող է տևել երկու շաբաթ: Գործընթացի արդյունքում ՈԱԱԿ-ի և ՄՈՒՀ-ի համաձայնության չգալու դեպքում նրանց միջև կնքված պայմանագիրը երկարացվում է մեկ ամիս ժամկետով մինչև փորձագիտական խմբի կազմի վերաբերյալ համաձայնության գալը: Փորձագիտական խմբի նոր կազմի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում ուսումնական հաս-

տատության հետ կնքված պայմանագրի գործողությունը կասեցվում է: Հավատարմագրման գործընթացը վերսկսելու համար պետք է ներկայացնել նոր դիմում-հայտ, որից հետո կնքվում է նոր պայմանագիր:

5. Փորձաքննություն (արտաքին գնահատում)

Փորձաքննության նպատակն է ***փորձագիտական խմբի*** միջոցով իրականացնել ՈԱԱԿ-ին դիմած ուսումնական հաստատության, նրա ենթակառույցների, գործընթացների, առանձին կրթական ծրագրերի արտաքին գնահատում և պատրաստել փորձագիտական զեկույց ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովին ներկայացնելու համար: Փորձագիտական խմբի անդամները հանդես են գալիս որպես կառուցողական քննադատներ:

Փորձագիտական խումբն իր գործունեությունն իրականացնում է օրինականության և անկախության սկզբունքների հիման վրա՝ առաջնորդվելով հետևյալ կարգավորող փաստաթղթերով՝

- ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին»
- Պետական կրթական չափորոշիչներ և այլ իրավական ակտեր:

Փորձաքննության չորս հիմնական քայլերն են՝

- **Փաստաթղթերի նախնական ուսումնասիրություն**: Փորձագիտական խումբը ծանոթանում է ՄՈՒՀ-ի ներկայացրած ինքնավերլուծությանը և փաստաթղթերի փաթեթին:
- **Փորձագիտական այց:** Փորձագիտական խումբը կատարում է այց մասնագիտական ուսումնական հաստատություն՝ դիտարկվող կառուցվածքային միավորների ուսումնասիրության համար:
- **Հաշվետվության պատրաստում:** Փորձագիտական խումբը պատրաստում է զեկույց, որը ներառում է իրավիճակի վերլուծությունը, ձեռքբերումների հավաստումը և հետագա բարելավման համար խորհրդատվությունը:
- **Որոշման կայացում**: Հավատարմագրման հանձնաժողովը փորձագիտական գնահատման արդյունքների հիման վրա որոշում է կայացնում, և ՈԱԱԿ-ն իր պաշտոնական համացանցային կայքէջում հրապարակում է եզրակացությունը և Հավատարմագրման հանձնաժողովի որոշումը:

5.1 Փաստաթղթերի նախնական ուսումնասիրություն

Փաստաթղթերի նախնական ուսումնասիրության նպատակն է գնահատել ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների և մասնագիտության կրթական ծրագրի ինքնավերլուծությունների և ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը հավատարմագրման չափանիշներին և պետական կրթական չափորոշիչներին՝ արդյունավետության և գործունակության տեսանկյունից:

ՈԱԱԿ-ի համակարգողից ինքնավերլուծությունը և փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո փորձագիտական խումբը չորս շաբաթվա ընթացքում ուսումնասիրում է փաստաթղթերը և պատ-

բաստում նախնական զեկույց: Փաստաթղթերի ուսումնասիրության ընթացքում փորձագիտական խումբը ձգտում է պատասխանել հետևյալ հարցերին, որոնք պետք է ներառվեն փորձագիտական զեկույցի նախնական տարբերակում՝

- Գնահատելով ուժեղ և թույլ կողմերը՝ ինքնավերլուծության մեջ ներկայացված է արդյո՞ք առկա իրավիճակի մանրամասն վերլուծություն
- Արդյո՞ք ինքնավերլուծությունն պարունակում է բավականաչափ փաստեր փորձագիտական գնահատում իրականացնելու համար
- Արդյո՞ք ինքնավերլուծությունն իրականացված է ըստ համապատասխան չափանիշների
- Արդյո՞ք նշված փաստերը բխում են հավաստի աղբյուրներից
- Արդյո՞ք ինքնավերլուծությունում ներկայացված են համապատասխան ոլորտների բարելավմանն ուղղված գործողությունները և ժամանակացույցը:

Այսպիսով, փաստաթղթերի նախնական ուսումնասիրման ընթացքում փորձագետները պարտավոր են՝

- ամեն մի չափորոշիչի վերաբերյալ առանձնացնել հաստատության կամ ծրագրի ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև այն հարցերը, որոնք բավարար չեն ներկայացված, խնդրահարույց են և ենթակա են ուսումնասիրման փորձագիտական այցի ընթացքում,
- ընդգծել այն ոլորտները, որոնք անհրաժեշտ են հետագա ուսումնասիրության և գնահատման համար,
- իրականացվող գործողությունների շրջանակներում կազմել այնպիսի հարցեր, որոնք կհետազոտվեն փորձագիտական այցի ժամանակ:

ՄՈՒՀ-ի գործունեության, կրթական ծրագրի իրականացման արդյունավետ գնահատման նպատակով փորձագիտական խմբին բոլոր անհրաժեշտ գործիքներով ապահովելու համար ՈԱԱԿ-ը կտրամադրի թղթապանակ հետևյալ փաստաթղթերով՝

- օրենսդրական և նորմատիվ փաստաթղթեր,
- հաշվետվության պատրաստման ուղենիշներ և համապատասխան ձևաչափ,
- այցի համար հաստատված ժամանակացույց,
- այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո յուրաքանչյուր փորձագետ խմբի ղեկավարին և համակարգողին է ներկայացնում իր անհատական հաշվետվությունը, ինչի հիման վրա կազմվում է փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը: Զեկույցի նախնական տարբերակը համաձայնեցվում է փորձագիտական խմբի անդամների հետ: Այս գործընթացի համար պատասխանատու են ՈԱԱԿ-ի համակարգողը, փորձագիտական խմբի ղեկավարը և ՈԱԱԿ-ի քարտուղարը: ՈԱԱԿ-ի տնօրենը հաստատում է փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, հետագա գործողությունները և այցի ընթացքում քննարկվելիք հարցերը:

5.2 *Փորձագիտական այց մասնագիտական ուսումնական հաստատություն*

5.2.1 Նախապատրաստական այց

Մինչև ուսումնական հաստատություն փորձագետների խմբի այցը ՈԱԱԿ-ի համակարգողը, խորհրդակցելով փորձագիտական խմբի ղեկավարի հետ, մշակում է այցի ժամանակացույցը: Ժամանակացույցը պետք է լինի բավականին ամփոփ և ճկուն՝ փորձագիտական

խմբի արդյունավետ գործունեությունն ապահովելու համար: Այցին նախորդող շաբաթվա ընթացքում ՈԱԱԿ-ի համակարգողը և փորձագիտական խմբի ղեկավարը կատարում են նախապատրաստական այց՝ ուսումնական հաստատության հետ փորձագիտական այցի ժամանակացույցը քննարկելու և համաձայնեցնելու համար:

Նախապատրաստական շաբաթվա ընթացքում ՄՈՒՀ-ում տեղի են ունենում մի քանի գործընթացներ միաժամանակ.

1. ՈԱԱԿ-ի համակարգողի և փորձագիտական խմբի ղեկավարի հանդիպումը ՄՈՒՀ-ի ռեկտորի/տնօրենի հետ:

2. Հանդիպում ՄՈՒՀ-ի կոնտակտային անձի և/կամ որակի ապահովման խմբի հետ:

3. Կոնտակտային անձի նախապատրաստական հանդիպումներն անձնակազմի, ուսանողների հետ և այլն: Այս նպատակով ՈԱԱԿ-ի համակարգողը փորձաքննություն անցնող ուսումնական հաստատությանը տրամադրում է անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը փորձաքննության գործընթացի վերաբերյալ, այդ թվում՝ այցի պլանը և ժամանակացույցը: Ուսումնական հաստատությունը պետք է տեղեկացնի բոլորին, որ այցի շրջանակում փորձագետները կարող են տալ ցանկացած հարց ցանկացած աշխատակցի կամ ուսումնառողի, և որ պատասխանները մնում են գաղտնի: Հաստատության ստորաբաժանումների ղեկավարները պետք է տեղեկացված լինեն, որ պարտավոր են փորձաքննության շրջանակներում խմբի անդամներին ուսումնասիրության համար տրամադրել ցանկացած տեղեկատվություն և փաստաթուղթ, ինչպես նաև դրանց կրկնօրինակները:

Նախապատրաստական այցն ունի չորս հիմնական նպատակ.

- **ՄՈՒՀ-ի հետ համաձայնեցնել փորձագիտական այցի ծրագիրը և ժամանակացույցը.** երաշխավորել, որ այցի ծրագիրը համապատասխանում է փորձագիտական խմբի ակնկալիքներին՝ լինելով իրագործելի փորձաքննության համար տրամադրված ժամանակահատվածում:

- **Քննարկել փորձագիտական խմբին անհրաժեշտ հավելյալ տեղեկատվությունը**. ապահովել, որ այցի ընթացքում ուսումնական հաստատությանը կարողանա տրամադրել փորձագիտական խմբին անհրաժեշտ փաստաթղթերը և հավելյալ տեղեկատվությունը:

- **Ստուգել, թե չկան արդյոք առանձնահատկություններ**, որոնց մասին փորձագիտական խումբը պետք է տեղյակ լինի:

- **Ստուգել ՄՈՒՀ-ի նախապատրաստվածությունը փորձագիտական այցին** (ներառյալ խմբին առաջարկվող աշխատասենյակների, հանդիպումների սրահի, տրամադրվող տեխնիկական միջոցների ուսումնասիրություն և այլն):

Եթե ուսումնական հաստատությունը գործունեություն է իրականացնում տարբեր վայրերում, և հիմնական այցի շրջանակում դիտումները երկար ժամանակ են պահանջում, այս փուլում կարող են կատարվել փոխհամաձայնեցված այցելություններ այդ վայրեր: Այսպիսի այցերն իրականացվում են փորձագիտական խմբի անդամներից կազմված խմբի կողմից: Խմբի կազմում պետք է լինեն փորձագիտական խմբի համակարգողը, ղեկավարը և/կամ խմբի մեկ այլ անդամ:

Նախապատրաստական այցից հետո ՈԱԱԿ-ի համակարգողը փորձագիտական խմբին տրամադրում է վերանայված և ՈԱԱԿ-ի տնօրենի կողմից հաստատված վերջնական ժամանակացույցը:

5.2.2 Փորձագիտական այց

Այցն արտաքին գնահատման գործընթացի մի մասն է, երբ փորձագիտական խումբը կատարում է այց մասնագիտական ուսումնական հաստատություն: Փորձագիտական այցի հիմնական նպատակներն են՝ պարզել ինքնավերլուծության մեջ նշված փաստերի և տեղեկատվության հավաստիությունը, ձեռք բերել լրացուցիչ տեղեկատվություն հանդիպումների և հարցումների միջոցով, ուսումնասիրել կրթական գործընթացները և լրացուցիչ փաստաթղթեր, ավելի լավ պատկերացում կազմելու փորձաքննության ենթակա ուսումնական հաստատության գործունեության վերաբերյալ: Սովորաբար այցը տևում է 3-7 օր՝ կախված փորձաքննության ենթակա ուսումնական հաստատության ծավալից և առանձնահատկություններից, ինչպես նաև հավատարմագրման տեսակից:

Այցը սովորաբար սկսվում է փորձագիտական խմբի փակ հանդիպումով, որի նպատակներն են՝

- քննարկել զեկույցի նախնական տարբերակից հետո ստացված լրացուցիչ տեղեկատվությունը,
- մանրամասն պլանավորել յուրաքանչյուր հանդիպման և ֆոկուս խմբի քննարկման բովանդակությունը, ինչպես նաև հստակեցնել այն հարցերը, որոնք կարող են առաջանալ գործընթացում,
- ուսումնասիրել այցի տեխնիկական պատրաստվածությունը:

Փորձագիտական այցի արդյունավետությունն ապահովելու համար փորձագիտական խումբը պետք է սահմանի ձեռք բերվող

անհրաժեշտ առաջնահերթ տեղեկատվությունը: Այն ներառում է հարցերի հերթականությունը և ուսումնասիրման ենթակա հարցերի բաշխումը փորձագետների միջև՝ հաշվի առնելով խմբի անդամների փորձառությունը: Գործընթացի արդյունավետ կազմակերպման համար պատասխանատու են փորձագիտական խմբի ղեկավարը և ՈԱԱԿ-ի համակարգողը: Խմբի ղեկավարը պատասխանատու է նաև բոլոր հանդիպումների անցկացման և համապատասխան արձանագրությունների կազմման համար:

5.2.3 Փորձագիտական այցի ընթացքում հանդիպումների տեսակներ

1. *Ժամանակացույցով սահմանված հանդիպումներ*

Ժամանակացույցով սահմանված հանդիպումները սկսելու համար **կոնտակտային անձը** փորձագիտական խմբի ղեկավարին և ՈԱԱԿ-ի համակարգողին տրամադրում է հնարավոր մասնակիցների ցանկը և նրանց կոնտակտային տվյալները: Փորձագիտական խմբի ղեկավարը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատահական սկզբունքով ընտրում են հանդիպման, հարցազրույցի կամ ֆոկուս խմբի մասնակիցներին՝ մտապահելով ներկայացուցչականության ապահովման խնդիրը: Խմբի ղեկավարը հանդիպումը վարում է՝ հետևելով նախապես պատրաստված հարցերին: Պարզաբանումների անհրաժեշտության դեպքում փորձագիտական խմբի ղեկավարի թույլտվությամբ կարող են տրվել նաև չնախատեսված հարցեր:

Փորձագիտական խմբի քարտուղարը պատասխանատու է արձանագրությունների և գրառումների կատարման համար: Սակայն, խմբի մյուս անդամները նույնպես յուրաքանչյուր հանդիպման ընթացքում

իրենց հերթին գրառումներ են կատարում՝ իրենց անհատական հաշվետվությունում օգտագործելու համար:

Այցի ընթացքում փորձագիտական խմբի անդամները պետք է աշխատեն թիմով: Սակայն, անհրաժեշտության դեպքում խումբը կարող է բաժանվել ենթախմբերի՝ ուսումնասիրելու իրենց փորձառությանն ավելի համապատասխան ոլորտներ: Այս պարագայում փորձագիտական խմբի ղեկավարը և ՈԱԱԿ-ի համակարգողը պետք է ղեկավարեն տարբեր խմբեր:

2. Հանդիպումներ ՄՈՒՀ-ի ստորաբաժանումներում

Սովորաբար, ստորաբաժանումների աշխատակիցների հետ հանդիպումների նպատակն է պարզաբանել փաստաթղթերի նախնական ուսումնասիրության ընթացքում վերհանված խնդիրները: Խմբի անդամներն իրենք կարող են ընտրել հարցման մասնակիցներին: Այն կարող է լինել հարցազրույց անձնակազմի որևէ անդամի, ուսանողի, վարչական աշխատակցի կամ այս շահակիցների խմբերի հետ: ՈԱԱԿ-ի համակարգողը **կոնտակտային անձի** հետ պետք է նախապես կազմակերպի այսպիսի հանդիպումները ՄՈՒՀ-ում: Նման հանդիպումները կազմակերպվում են տեղում, և պարտադիր չէ դրանք հստակ սահմանել ժամանակացույցով:

*3. **Փակ** հանդիպումներ*

Փակ հանդիպումները նախատեսված են միայն փորձագիտական խմբի անդամների համար ու նպատակաուղղված են ամփոփելու հիմնական արդյունքները, յուրաքանչյուր հարցի վերաբերյալ ձեռք բերելու համընդհանուր ընկալում ու համաձայնություն, սկսելու վերջնա-

կան հաշվետվության պատրաստման աշխատանքները: Փակ հանդիպումները տեղի են ունենում երեք տարբեր ձևաչափով.

ա) ***Ամենօրյա փակ հանդիպումներ***. սովորաբար տեղի են ունենում այցի յուրաքանչյուր օրվա վերջում: Այս հանդիպումների ընթացքում պետք է ամփոփվեն օրվա արդյունքները, ինչպես նաև քննարկվեն և/կամ վերանայվեն ուսումնասիրման ենթակա հարցերը: Նման հանդիպման ընթացքում կարելի է քննարկել նաև այցի պլանների փոփոխությունները կամ ավելացումները: Փակ հանդիպումները խմբի անդամներին հնարավորություն են տալիս նաև ամփոփելու առանձին խմբերով իրականացրած հանդիպումների արդյունքները:

բ) ***Տեղում կազմակերպվող փակ հանդիպումներ***. անհրաժեշտության դեպքում կազմակերպվում են այցի ընթացքում տեղի ունեցած որոշակի իրադարձությունից հետո: Այսպիսի հանդիպումների կարող են կազմակերպվել փորձագիտական խմբի յուրաքանչյուր անդամի նախաձեռնությամբ:

գ) ***Վերջնական փակ հանդիպում այցի ավարտից հետո***. նպատակն է ամփոփել այցի արդյունքները և ձեռքբերումները, վերջնական հաշվետվության բովանդակային կառուցվածքը: Այս հանդիպման կարևոր բաղադրիչը փորձագիտական խմբի բոլոր անդամների համաձայնության ձեռքբերումն է այն կետերի շուրջ, որոնք պետք է ներառվեն զեկույցի նախնական տարբերակում: Փորձագիտական խմբի ղեկավարը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատասխանատու են վերջնական զեկույցի հիմնական ուղղությունները, հետագա բարելավման կարիք ունեցող ոլորտները սահմանելու, ինչպես նաև ձեռքբերումներն արձանագրելու համար:

Այս **փակ** հանդիպումների արդյունքում փորձագիտական խումբը պետք է լրացնի հաշվետվության համապատասխան բաժինները և դրանք **ամենօրյա և վերջնական փակ** հանդիպումներից հետո ներ-

կայացնի ՈԱԱԿ: Այս միջոցառման նպատակն է խուսափել կոռուպցիոն ռիսկերից:

*4. **Բաց** հանդիպումներ*

Բաց հանդիպումները նախատեսվում են ըստ այցի ժամանակացույցի և հնարավորություն են տալիս վարչական, պրոֆեսորադասախոսական կազմի ցանկացած անդամին կամ ուսումնառողին հանդիպել փորձագիտական խմբի հետ՝ որոշակի հարցեր քննարկելու կամ գործընթացի մասին կարծիք հայտնելու համար:

Ուսումնական հաստատությունը այս հնարավորության մասին հայտարարում է այցից երկու շաբաթ առաջ: **Բաց** հանդիպումների մասին հայտարարությունը և փորձագիտական այցի հաստատված ծրագիրը պետք է հասանելի լինեն բոլոր աշխատակիցների և ուսումնառողների համար:

Մասնակիցների գրանցումը կատարում է փորձագիտական խմբի համակարգողը: Յուրաքանչյուր դիմողին հնարավորություն է ընձեռվում կարճաժամկետ (ոչ ավելի քան 15 րոպե տևողությամբ) հանդիպում ունենալ փորձագետների հետ: **Բաց** հանդիպումների մասնակիցները կարող են փորձագետներին հանձնել գրավոր դիմումներ, որտեղ պետք է արտացոլված լինեն այն խնդիրները, որոնց վրա նրանք կցանկանային հրավիրել փորձագետների ուշադրությունը:

Փորձագիտական խումբը պարտադիր ուսումնասիրում է **բաց** հանդիպման ժամանակ ստացված ցանկացած տեղեկատվության հիմքերը, վերլուծում է դրանք և հաշվի առնում իր հետագա քննարկումների ընթացքում:

5. ***Ամփոփիչ*** *հանդիպում*

Ամփոփիչ հանդիպումը փորձագիտական այցի պաշտոնական փակման փուլն է, որի նպատակն է ներկայացնել այցի նախնական արդյունքները:

Փորձագիտական խմբի անդամները հանդիպում են փորձաքննություն անցած ուսումնական հաստատության ղեկավարի և նրա կողմից հրավիրված այլ աշխատակիցների հետ: **Ամփոփիչ** հանդիպման ընթացքում փորձագիտական խմբի ղեկավարը ՈԱԱԿ-ի համակարգողի հետ ներկայացնում է բանավոր հակիրճ հաշվետվություն խմբի դիտարկումների վերաբերյալ:

Ամփոփիչ հանդիպման ժամանակ ուսումնական հաստատությունն իր գնահատականն է տալիս նաև փորձաքննության գործընթացի կազմակերպման և անցկացման վերաբերյալ, ինչը գրառվում է փորձագիտական խմբի քարտուղարի կողմից:

Գնահատման արդյունքները հիմք են հանդիսանում ՈԱԱԿ-ի մոտեցումների և ընթացակարգերի հետագա բարելավման համար:

Գործընթացի վերջում խումբը պետք է շնորհակալություն հայտնի հաստատության ղեկավարին՝ այցի ընթացքում տրամադրված ժամանակի և համապատասխան ռեսուրսների համար: Կարևոր է նշել, որ որևէ որոշում չի կայացվում, և քննարկում տեղի չի ունենում: Հավատարմագրման մասին որոշումը կայացնում է այլ մարմին՝ Հավատարմագրման հանձնաժողովը:

5.3 Փորձագիտական զեկույցի պատրաստում

5.3.1 Անհատական հաշվետվություններ

Այցի ավարտին յուրաքանչյուր փորձագետ կազմում է իր անհատական հաշվետվությունը և ներկայացնում խմբի ղեկավարին ու ՈԱԱԿ-ի համակարգողին:

Անհատական հաշվետվություններում ներկայացված վերլուծությունները հիմնված են ինքնավերլուծության փաստաթղթերի ուսումնասիրության և այցի ընթացքում ձեռք բերված փաստերի վրա: Այդ փաստերը կազմում են փորձագիտական խմբի տվյալների հիմնական հենքը:

Անհատական հաշվետվությունները պետք է պարունակեն բավարար հիմքեր՝ փորձագիտական խմբի վերջնական եզրակացության տրամաբանությունը և օբյեկտիվությունն ապահովելու համար: Բացի այդ, ուսումնական հաստատության կողմից փորձագիտական եզրակացության հնարավոր բողոքարկման դեպքում փորձագետների գրառումները հիմք են ծառայելու հիմնավորված պատասխանների պատրաստման համար:

Անհատական հաշվետվությունները պետք է ներառեն հավատարմագրման յուրաքանչյուր չափորոշիչի մասին փորձագիտական արդյունքները, ինչի հիման վրա փորձագիտական խմբի կողմից կատարվում են հիմնավորված եզրակացություններ յուրաքանչյուր չափանիշի վերաբերյալ. գործընթացը ղեկավարվում է ՈԱԱԿ-ի համակարգողի կողմից: Եթե խմբի անդամների միջև առաջանում են անհամաձայնություններ հիմքերի մեկնաբանությունների կամ եզրակացությունների վերաբերյալ, ապա ՈԱԱԿ-ի համակարգողը պատասխանատու է իրավիճակի կարգավորման և խմբի անդամների միջև համաձայնության գալու համար:

5.3.2 Փորձագիտական զեկույց

Խմբի ղեկավարը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատասխանատու են փորձագիտական զեկույցի պատրաստման համար: Փորձագիտական զեկույցը չպետք է ներառի դատողություններ (դրական կամ բացասական) անհատների կամ նրանց գործունեության մասին: Զեկույցը կազմվում է հետևյալ փուլերով՝

- **Առաջին փուլ**: Յուրաքանչյուր չափորոշիչի գնահատում. պետք է կատարվի յուրաքանչյուր չափորոշիչի խորը և մանրամասն վերլուծություն՝ հիմնված փաստերի և հիմնավորումների վրա: Փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը ստանալուց հետո, Հավատարմագրման կարգով սահմանված ընթացակարգով և ժամկետներում, ՈԱԱԿ-ն այն ուղարկում է ուսումնական հաստատության ռեկտորին/տնօրենին քննարկման նպատակով: Ուսումնական հաստատությունը զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ իր գրավոր դիտողություններն ու առարկություններն է ներկայացնում ՈԱԱԿ՝ Հավատարմագրման կարգով սահմանված ժամկետներում: Դիտողություններ ու առարկություններ չունենալու դեպքում ուսումնական հաստատությունը գրավոր հավաստում է փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ իր համաձանությունը:
- **Երկրորդ փուլ**: Յուրաքանչյուր չափանիշի գնահատում. յուրաքանչյուր չափորոշիչի գնահատականի և նախնական զեկույցի վերաբերյալ, ուսումնական հաստատության արձագանքի հիման վրա, խմբի ղեկավարը ՈԱԱԿ-ի համակարգողի աջակցությամբ իրականացնում է չափանիշի խորը վերլուծություն՝ հիմնվելով փաստերի և ապացույցների վրա:
- **Երրորդ փուլ**: Յուրաքանչյուր չափանիշի վերաբերյալ եզրակացություն. ներառելով յուրաքանչյուր չափանիշի մասին եզրակացու-

թյունը՝ վերջնական զեկույցն ուղարկվում է Հավատարմագրման հանձնաժողով որոշման կայացման համար:

Եթե առաջին փուլում ուսումնական հաստատությունը զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ ունի դիտողություններ և առարկություններ, ապա պետք է հիմնավորի՝

- մանրամասն բացատրելով խնդրահարույց կետերը,
- ներկայացնելով հստակ փաստեր,
- հղումներ կատարելով փորձագիտական զեկույցի համապատասխան բաժիններին,
- վերաշարադրելով անհրաժեշտ մասերը:

ՄՈՒՀ-ը առարկություն և դիտողություն կարող է անել միայն հաստատությանը վերաբերող փաստերի ու տեղեկատվության վերաբերյալ: Այլ ճշգրտումներ ընդունելի չեն:

Փորձագիտական զեկույցի ձևաչափում նախատեսված է հատուկ բաժին ՄՈՒՀ-ի արձագանքի համար, որպեսզի Հավատարմագրման հանձնաժողովը պատկերացում կազմի դիտողությունների վերաբերյալ: ՈԱԱԿ-ի համակարգողը և խմբի ղեկավարը զեկույցում փոփոխություններ կարող են կատարել միայն համապատասխան բաժնում ՄՈՒՀ-ի դիտողությունները նշելուց հետո:

ՈԱԱԿ-ի համակարգողի պարտականությունն է ՄՈՒՀ-ի գրավոր պատասխանը փոխանցել խմբի անդամներին և ՈԱԱԿ-ի տնօրենին: Փորձագիտական խումբը պետք է ուսումնասիրի այն և կատարի համապատասխան փոփոխություններ զեկույցի նախնական տարբերակում: Փոփոխությունների ենթարկված զեկույցի նախնական տարբերակը փորձագիտական խմբի ղեկավարի և համակարգողի կողմից վերջնականորեն խմբագրվելուց հետո համաձայնեցման համար տրվում է փորձագիտական խմբի մյուս անդամներին:

Այս գործընթացից հետո զեկույցը ներկայացվում է ՄՈՒՀ-ին հաստատման համար: ՄՈՒՀ-ի ռեկտորի և փորձագիտական խմբի անդամների հաստատումը վավերացվում է համապատասխան ստորագրությամբ և ՄՈՒՀ-ի կնիքով: Հավատարմագրման կարգի համաձայն՝ նախնական տարբերակի պատրաստումը, խմբի անդամների հաստատումը և ՈԱԱԿ-ին վերջնական զեկույցի հանձնումը պետք է իրականացվեն չորս շաբաթվա ընթացքում:

ՄՈՒՀ-ի համաձայնությունից հետո ՈԱԱԿ-ը վերանայում է վերջնական զեկույցը և ներկայացնում այն Հավատարմագրման հանձնաժողովին՝ որոշում կայացնելու համար:

Հավատարմագրման կարգով սահմանված ընթացակարգի համաձայն՝փորձագիտական խումբը վերջնական զեկույցը ներկայացնում է ՈԱԱԿ-ին այցի ավարտից հետո՝4 շաբաթվա ընթացքում:

Եթե Հավատարմագրման հանձնաժողովը համարում է, որ որոշման կայացման համար բավարար հիմքեր և հիմնավորումներ ներկայացված չեն, զեկույցը վերադարձվում է փորձագիտական խմբին ուսումնասիրման նպատակով:

Փորձագիտական խմբի վերջնական զեկույցը ներառում է հավատարմագրման յուրաքանչյուր չափանիշի և չափորոշիչի ուժեղ և թույլ կողմերի գնահատումը, ձեռքբերումների հավաստումը, ինչպես նաև հավատարմագրման որոշման մասին գաղտնի խորհրդատվությունը, ինչը պետք է ներկայացվի Հավատարմագրման հանձնաժողովին: Հավատարմագրման որոշման մասին այս խորհրդատվությունը չի ներառվում ՄՈՒՀ-ին ներկայացվող զեկույցի նախնական տարբերակում, քանի որ Հավատարմագրման հանձնաժողովն է տեղեկացնում հավատարմագրման որոշման մասին:

Վերջնական զեկույցը համարվում է գաղտնի մինչև հավատարմագրման հանձնաժողովի կողմից որոշման կայացումը: Այն չպետք է հասանելի լինի երրորդ կողմի անձանց կամ կազմակերպություններին, բացառությամբ տվյալ ՄՈՒՀ-ի կողմից լիազորվածների:

5.3.3 Վկայություններ և խորհրդատվություն

ՄՈՒՀ-ի ձեռքբերումների մասին փորձագիտական խմբի վկայությունները և բարելավման նպատակով ներկայացված խորհրդատվությունը փորձագիտական զեկույցի կարևոր մասն են կազմում:

- Վկայությունները վերաբերում են փորձագիտական խմբի կողմից նշված դրական փորձին և ՄՈՒՀ-ի հիմնական ձեռքբերումներին:
- Խորհրդատվությունը վերաբերում է փորձագիտական խմբի կարծիքով բարելավման կարիք ունեցող ոլորտներին, բայց ոչ խնդիրների լուծման կոնկրետ ուղիներին: Սակայն, ՈԱԱԿ-ի հետ նախապես ձեռք բերված համաձայնությամբ, փորձագիտական խումբը կարող է առաջարկել բարելավման ուղիներ: Խորհրդատվությունը նաև նպատակաուղղված է ընդգծելու գերակա խնդիրները, որոնց անհրաժեշտ է անդրադառնալ:

Հավատարմագրման հանձնաժողովը ակնկալում է, որ ՄՈՒՀ-ը կկիրառի հաշվետվությունը: Հանրային հայտարարություններում հաստատությունը պետք է խուսափի համատեքստից դուրս հաշվետվությանը հղում կատարելուց կամ միայն դրական կամ բացասական հատվածների մասին տեղեկացնելուց:

5.3.4 ՈԱԱԿ-ի եզրակացությունը

Ուսումնական հաստատության ինքնավերլուծության, փորձագիտական խմբի հաշվետվության և հաստատված վերջնական փորձա-

գիտական զեկույցի հիման վրա ՈԱԱԿ-ի համակարգողը և խմբի ղեկավարը, Հավատարմագրման կարգով սահմանված ժամկետներում, պատրաստում են ՈԱԱԿ-ի եզրակացության նախնական տարբերակը:

ՈԱԱԿ-ի եզրակացությունը փորձագիտական զեկույցից ավելի հակիրճ պետք է ներառի ինքնավերլուծության ուսումնասիրության և այցի արդյունքների ամփոփումը: Այս փաստաթղթի բովանդակությունը պետք է բխի փորձագիտական զեկույցում ներկայացված եզրակացություններից:

ՈԱԱԿ-ի եզրակացությունը պետք է ներկայացվի ամենաշատը 10 էջի սահմաններում՝ ներառելով հավատարմագրման մասին փորձագիտական խմբի դրական կամ բացասական եզրակացության առաջարկությունը: Հավատարմագրման հանձնաժողովը ՈԱԱԿ-ի եզրակացության հետ պետք է ստանա նաև փորձագիտական զեկույցը՝ որոշում կայացնելիս իրավիճակն ավելի լավ հասկանալու համար:

Փորձագիտական զեկույցը և ՈԱԱԿ-ի եզրակացությունն ուղարկվում են նաև ուսումնական հաստատություն՝ Հավատարմագրման հանձնաժողովի նիստի քննարկմանը պատրաստվելու համար: ՈԱԱԿ-ի համակարգողը պետք է ուսումնական հաստատությանը տեղեկացնի Հավատարմագրման հանձնաժողովի նիստի օրվա և վայրի մասին:

5.4 Դիմում-հայտը հետ վերցնելու գործընթաց

Ուսումնական հաստատությունը՝ իր և ՈԱԱԿ-ի միջև կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի համաձայն, կարող է դուրս գալ հավատարմագրման գործընթացից:

5.5 Որոշման կայացում

Հավատարմագրման հանձնաժողովի որոշման կայացման ընթացակարգը սահմանվում է «Հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով»:

Հավատարմագրման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրում են ներկայացված փորձագիտական զեկույցը, ՈԱԱԿ-ի եզրակացությունը և փորձագիտական զեկույցի մասին ՄՈՒՀ-ի արձագանքը: Այս ուսումնասիրությունը նպատակաուղղված է ստուգելու՝

- փորձագիտական խմբի կողմից ՈԱԱԿ-ի քաղաքականության և ընթացակարգերի իրականացման վստահելի ճշգրտությունը,
- վերջնական հաշվետվության որակն ու օգտակարությունը, ինչպես նաև ՈԱԱԿ-ի պահանջներին բավարարելու մակարդակը:

Հավատարմագրման հանձնաժողովի անդամները նաև ՈԱԱԿ-ի եզրակացության անկախ ընթերցողներ են և կարող են արձագանքել, եթե որոշ կետեր հստակ ներկայացված չեն, կամ ձևակերպումները ճշգրիտ չեն: Փորձագիտական զեկույցը և այլ փաստաթղթեր ուսումնասիրելուց հետո Հավատարմագրման հանձնաժողովը կայացնում է հավատարմագրման մասին որոշում, որը կարող է լինել ստորև նշվածներից որևէ մեկը՝

- **Ենթակա է հավատարմագրման.** եթե բավարարում է հավատարմագրման բոլոր չափանիշներին,
- **Ենթակա է պայմանական հավատարմագրման.** եթե մասնակի բավարարում է հավատարմագրման չափանիշներին, և նշված թերությունները հնարավոր է շտկել ոչ ավել, քան 2 տարվա ընթացքում,
- **Ենթակա չէ հավատարմագրման.** եթե չի բավարարում հավատարմագրման չափանիշներին, և առկա ռեսուրսներով նշված թերությունները հնարավոր չէ շտկել 2 տարվա ընթացքում:

Փորձագիտական խմբի ղեկավարը Հավատարմագրման հանձնաժողովի նիստին ներկայացնում է ՈԱԱԿ-ի եզրակացությունը: ՄՈՒՀ-ի ղեկավարը և համապատասխան ներկայացուցիչները նունպես կարող են եզրակացության վերաբերյալ հայտնել իրենց կարծիքը: Նիստի վերջում Հավատարմագրման հանձնաժողովի նախագահը հայտարարում է հավատարմագրման մասին կայացրած որոշումը:

5.5.1 Հավատարմագրման մասին որոշման հրապարակում

Հավատարմագրման հանձնաժողովի որոշումից հետո, Հավատարմագրման կարգով սահմանված ընթացակարգով և ժամկետներում, ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրման արդյունքների մասին եզրակացությունը և Հավատարմագրման հանձնաժողովի որոշումը տեղադրվում են ՈԱԱԿ-ի պաշտոնական համացանցային կայքէջում:

ՈԱԱԿ-ի հավատարմագրման մասին ընդունված որոշումը հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցներով:

ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի ընդունած որոշումը հավատարմագրման վկայականի և ներդիրի ձևաթղթերի հետ միասին ուղարկվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմին՝ հաստատելու որպես անհատական գերատեսչական ակտ: Հավատարմագրման կարգով սահմանված ժամկետներում նախարարությունն ուսումնասիրում է Հավատարմագրման հանձնաժողովի կողմից ներկայացված նյութերը, ընդունում որոշում պետական հավատարմագրման մասին, որի հիման վրա ուսումնական հաստատությանն ինստիտուցիոնալ հավատարմագրման դեպքում տրվում է պետական հավատարմագրման վկայական, իսկ ծրագրային հավա-

տարմագրման դեպքում՝ վկայականի ներդիր: Մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացվում է ՈԱԱԿ-ը՝ հավատարմագրման պետական գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելու համար: ԿԳ նախարարության որոշումն ուղարկվում է ուսումնական հաստատություն:

5.5.2 Գրանցում հավատարմագրման պետական գրանցամատյանում

ԿԳՆ-ն գրավոր տեղեկացնում է ՈԱԱԿ-ին հավատարմագրման որոշման մասին, ինչից հետո ՈԱԱԿ-ը կատարում է համապատասխան գրառումներ Հավատարմագրման պետական գրանցամատյանում:

5.5.3 Հավատարմագրման մասին որոշման բողոքարկում

Ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրման ցանկացած որոշում կարող է բողոքարկվել դատարան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

IV. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Պետական հավատարմագրման չափանիշները և չափորոշիչները նախատեսված են ուսումնական հաստատությունների կողմից հաստատության գործունեության և մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման ընթացքի ինքնավերլուծություն կատարելու և բարելավման կարիք ունեցող ոլորտները բացահայտելու համար:

Չափանիշները ձևակերպված են միջազգային նորմերին համապատասխան, ապահովում են բազմաձևություն և նորարարության բավարար ազատություն՝ ելնելով տարբեր հաստատությունների բնույթի, որդեգրած կրթական հայեցակարգերի և նպատակների միջև առկա էական տարբերություններից: Միաժամանակ, չափանիշները սահմանված են բավարար հստակությամբ՝ հավաստիանալու, որ ընդունելի որակի կարևոր ասպեկտները առկա են ձևակերպումներում: Հավատարմագրվածի կարգավիճակ ձեռք բերելու համար հաստատությունները պետք է գնահատվեն սահմանված բոլոր չափանիշներով:

Չափանիշները հատուկ առանձնացված ձևակերպումներ են, որոնք վերստուգելի տերմիններով սահմանում են հաստատության գործունեության կամ իրականացվող կրթական ծրագրերի բնութագրերը:

Չափորոշիչները ձևակերպումներ են, որոնք սահմանում են յուրաքանչյուր չափանիշին համապատասխանելու չափը և անաչառ գնահատելու համար անհրաժեշտ պայմանները:

ՀՀ կառավարության կողմից սահմանած չափանիշները, չափորոշիչները ու կատարողական ցուցիչները պարբերաբար վերանայվում են՝ երաշխավորելու դրանց հավաստիությունը, արդիականությունը, համապատասխանությունը որակի ապահովման ոլորտում առկա վերջին միտումներին և զարգացումներին:

1. Ենթակառուցվածքային հավատարմագրման չափանիշներ

Ընդհանուր սկզբունք

Մասնագիտական ուսումնական հաստատության կառավարման գործընթացներն միտված են ուսուցման, գիտական և հասարակությանը մատուցվող այլ ծառայությունների շարունակական բարելավմանը և հետապնդում են հետևյալ նպատակները՝

1. ձևավորել որակի մշակույթ,
2. ձևավորել կազմակերպչական մշակույթ, որը կնպաստի շրջանավարտների մոտ փոխանցելի գիտելիքների և հմտությունների ձևավորմանը՝ հարափոփոխ միջավայրին համապատասխան,
3. բարձրացել մասնագիտական ուսումնական հաստատության արդյունավետությունը և աջակցել հաստատության հաշվետվողականությանը,
4. նպաստել որակավորման աստիճանների համադրելիությանը, մրցակցությանը և մատուցվող ծառայությունների թափանցիկությանը ազգային և միջազգային մակարդակներում:

1.1 Առաքելությունը եվ նպատակները

N	Չափանիշը	Չափորոշիչները
1.	Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած	**ա**. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը

	քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:	համահունչ է ՈԱՇ-ին, **բ**. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները, **գ**. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների՝ գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

1.2 Կառավարումն ու վարչարարությունը

N	Չափանիշը	Չափորոշիչները
2.	ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունը արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:	**ա.** հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝ սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ, **բ.** ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը,

		գ. ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ, **դ**. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա, **ե**. քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում), **զ**. ՄՈՒՀ- ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ, **է**. ՄՈՒՀ-ում գործում են կրթական

		ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ:

1.3 Մասնագիտության կրթական ծրագրերը

N	Չափանիշը	Չափորոշիչները
3.	ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:	**ա**. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների, **բ**. ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը, **գ**. ՄՈՒՀ-ը ծրագրում է ուսանողների գնահատման քաղաքականու-

		թյուն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը, **դ**. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը, **ե**. ՄՈՒՀ-ը որդեգրել է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

1.4 Ուսանողները

N	Չափանիշը	Չափորոշիչները
4.	ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:	**ա**. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ, **բ**. ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների կրթական կարիքների ուսում-

		նասիրության քաղաքականություն և ընթացակարգեր, **գ.** ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար, **դ.** ՄՈՒՀ-ում սահմանված է վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց՝ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով, **ե.** ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ, **զ.** ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում, **է.** ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին, **ը.** ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական

		և մատուցվող այլ ծառայություն-ների գնահատման և որակի ապա-հովման մեխանիզմներ:

1.5 Պրոֆեսորադասախոսական եվ ուսումնաօժանդակ կազմը

	Չափանիշը	Չափորոշիչները
5.	ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականաց-նելու համար հաստա-տությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտա-կան որակներ ունեցող պրո-ֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազ-մով:	**ա**. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսա-կան և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր, **բ.** ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին եր-կայացվող հստակ պահանջներ, **գ.** ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քա-ղաքականություն և ընթացակար-գեր դասախոսական կազմի պար-բերաբար գնահատման համար, **դ.** պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատում-ների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասա-

		վանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ, **ե.** ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը, **զ.** ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր, **է.** ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

1.6 Հետազոտությունը եվ զարգացումը

N	Չափանիշը	Չափորոշիչները
6.	ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:	**ա.** ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն, **բ.** ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամ-

		կետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները, **գ.** ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով, **դ.** ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը, **ե.** ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

1.7 Ենթակառուցվածքը եվ ռեսուրսները

N	Չափանիշը	Չափորոշիչները
7.	ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:	**ա.** ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր, **բ.** ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապա-

		տասխան ֆինանսական ռեսուրս-ներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար, **գ.** ՄՈՒՀ-ում գործում է մասնագի-տությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահո-վող և երաշխավորող ֆինանսա-կան միջոցների բաշխման քաղա-քականություն, **դ.** ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մաս-նագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարու-նակական բարելավմանը և կայու-նությանը, **ե.** ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատ-վությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ, **զ.** ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապա-հական և անվտանգության պահ-

		պանմանն ուղղված ծառայություն-ների միջոցով՝ հաշվի առնելով հա-տուկ կարիքներ ունեցող ուսանող-ներին, **է.** ՄՈՒՀ-ում գործում են ուսանող-ներին և դասավանդողներին տրա-մադրվող ռեսուրսների կիրա-ռելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

1.8 Հասարակական պատասխանատվությունը

N	Չափանիշը	Չափորոշիչները
8.	ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտա-գործած ռեսուրսների հա-մար հաշվետու է պետու-թյանը և հասարակությանը:	**ա.** ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողակա-նության սահմանված կարգ, **բ.** ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացա-կարգերի, գործընթացների թա-փանցիկությունը և հասանելու-թյունը հասարակությանը, **գ.** ՄՈՒՀ-ում գործում են հասարա-կության հետ կապերի ձևավոր-մանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ, **դ.** ՄՈՒՀ-ում գործում են հասարա-կությանը գիտելիքների (արժեք-ների) փոխանցման մեխանիզմներ:

1.9 Արտաքին կապերը եվ միջազգայնացումը

N	Չափանիշը	Չափորոշիչները
9.	Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:	**ա.** Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր, **բ.** ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց, **գ.** ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ, **դ.** ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

1.10 Որակի ներքին ապահովման համակարգը

N	Չափանիշը	Չափորոշիչները
10.	ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:	**ա.** ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր, **բ.** որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ, **գ.** ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում, **դ.** որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է, **ե.** որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար, **զ.** որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

2. Մասնագիտական կրթական ծրագրի հավատարմագրման չափանիշներ

Ընդհանուր սկզբունք

Կրթական ծրագիրը շարունակաբար բարելավվում է և հետապնդում է հետևյալ նպատակները՝

1. ձևավորել ուսումնառության մշակույթ, որը կնպաստի շրջանավարտների մոտ փոխանցելի գիտելիքների և հմտությունների ձևավորմանը՝ հարափոփոխ միջավայրին համապատասխան,

2. բարձրացնել կրթական ծրագրի արդյունավետությունը և հասարակության հանդեպ հաշվետվողականությունը,

3. նպաստել համադրելիությանը և մրցակցությանը, ինչպես նաև որակավորումների ճանաչմանը ազգային և միջազգային մակարդակներում:

2.1 Մասնագիտության կրթական ծրագիրը

N	Չափանիշը	Չափորոշիչները
1.	Մասնագիտության կրթական ծրագիրը (այսուհետ՝ ՄԿԾ) համապատասխանում է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի, որակավորման բնութագրի և պետական կրթական չափորոշչի պահանջներին, ինչպես նաև ՄՈՒՀ-ի առաքելությանը:	**ա**. ՄԿԾ-ի նպատակները և խնդիրները համահունչ են ուսումնական հաստատության առաքելությանը և նպատակներին, **բ**. ՄԿԾ-ն հանդիսանում է ՄՈՒՀ-ի պլանավորման և ռեսուրսների բաշխման մաս, **գ**. ՄԿԾ-ն մանրամասն նկարագրված է՝ ըստ շնորհվող որակավորման ուսումնառության ակնկալվող արդյունքների,

		դ. ՄԿԾ-ն համապատասխանում է ՈԱՇ-ին, մասնագիտական կրթության որակավորումների բնութագրին և մասնագիտության պետական կրթական չափորոշչին, **ե**. ՄԿԾ-ն բովանդակային առումով հստակ մշակված է, համահունչ նմանատիպ այլ ճանաչված մասնագիտության կրթական ծրագրի հետ և նպաստում է ուսանողների ու դասախոսական կազմի շարժունությանը և միջազգայնացմանը, **զ**. ՄԿԾ-ի ուսումնառության ակնկալվող արդյունքները բավարարում են ուսանողների և այլ շահակիցների կարիքները, **է.** առկա են հստակ ընթացակարգեր ու մեխանիզմներ, որոնք ապահովում են ՄԿԾ-ի մշակման, հաստատման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման իրականացումը:

2.2 Դասախոսական կազմ

N	Չափանիշը	Չափորոշիչները
2.	ՄԿԾ-ն ապահովված է մասնագիտական անհրաժեշտ որակավորումներ ունեցող դասախոսական կազմով՝ ՄԿԾ-ի նպատակներն իրականացնելու համար:	**ա.** ՄԿԾ-ի համար սահմանված են դասախոսական կազմի մասնագիտական որակավորումներին ներկայացվող հստակ պահանջներ և դասախոսական կազմի հավաքագրման քաղաքականություն և ընթացակարգեր, **բ.** ՄԿԾ-ի շրջանակում սահմանվել է դասախոսական կազմի պարբերաբար գնահատման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք նպաստում են դասախոսների մասնագիտական կարիքների բացահայտմանը և զարգացմանը, **գ.** ՄԿԾ-ն նպաստում է դասախոսական կազմի կայացմանը և մասնագիտական առաջընթացին, **դ.** հիմնական դասախոսական կազմն ապահովում է ՄԿԾ-ի կայուն իրականացումը:

2.3 Դասավանդումը եվ ուսումնառությունը

N	Չափանիշը	Չափորոշիչները
3.	ՄԿԾ-ի շրջանակում կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդներն ապահովում են ուսանողների մոտ ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերումը:	**ա.** ՄԿԾ-ի շրջանակում հստակ սահմանված են դասավանդման և ուսումնառության մոտեցումները, մեթոդները, որոնք անհրաժեշտ են ուսումնառության ակնկալվող արդյունքները ձևավորելու համար, **բ.** ՄԿԾ-ն իրականացվում է՝ հաշվի առնելով միջազգային մակարդակում կիրառվող դասավանդման առաջավոր փորձը և մոտեցումները, **գ.** առկա են դասավանդման և ուսումնառության գործընթացների գնահատման և բարելավման մեխանիզմներ:

2.4 Ուսանողների գնահատումը

N	Չափանիշը	Չափորոշիչները
4.	ՄԿԾ-ն ունի **ակադեմիական ազնվությանը** նպաստող գնահատման համակարգ, ինչը թույլ է տալիս հավաստել ուսանողի առաջընթացը և ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը և ձեռքբե-	**ա.** ՄԿԾ-ի շրջանակում կիրառվում է ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը գնահատող հստակ և հուսալի համակարգ, որի չափանիշները հասանելի են դասախոսներին և ուսանողներին, **բ.** ՄԿԾ-ի շրջանակում առկա են

	րումը:	որակավորումների շնորհման նպատակով ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերումը հավաստող հստակ մեխանիզմներ, **գ.** ՄԿԾ-ի շրջանակում առկա են գնահատման համակարգի բարելավման հստակ մեխանիզմներ, **դ.** ՄԿԾ-ի շրջանակում հավասար և անաչառ մոտեցում է ցուցաբերվում ուսանողներին հստակ սահմանած քաղաքականության և ընթացակարգերի միջոցով՝ հաշվի առնելով նրանց պարտականությունները և բողոքները, **ե.** ՄԿԾ-ի շրջանակում խրախուսվում է ուսանողի ուսումնագիտական ինքնուրույնությունը և պայքարը գրագողության դեմ:

2.5 Հետազոտական եվ ստեղծագործական գործունեությունը

N	Չափանիշը	Չափորոշիչները
5.	ՄԿԾ-ի շրջանակում ապահովվում է կապը հետազոտական ու ստեղծագործական գործունեության և ուսումնառության միջև:	**ա.** ՄԿԾ-ի շրջանակում առկա են երկարաժամկետ ռազմավարություն, միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտական ոլոր-

		տում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները, **բ.** ՄԿԾ-ն հստակ քաղաքականության ու ընթացակարգերի միջոցով նպաստում է հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին, **գ.** ՄԿԾ-ի շրջանակում կարևորվում է հետազոտական գործունեության միջազգայնացումը, **դ.** ՄԿԾ-ի շրջանակում առկա են հետազոտական ու ստեղծագործական գործունեությունը և ուսումնական գործընթացը փոխկապակցելու և բարելավելու հստակ մեխանիզմներ:

2.6 Կրթական միջավայրը

N	Չափանիշը	Չափորոշիչները
6.	ՄԿԾ-ն նպաստում է որակյալ կրթության իրականացմանը՝ ձևավորելով ուսումնառության համար բարենպաստ միջավայր:	**ա.** ՄԿԾ-ի իրականացման համար առկա են անհրաժեշտ ռեսուրսներ, որոնք նպաստում են սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացմանն ու ուսումնական միջավայրի ստեղծմանը, **բ.** ուսանողներին տրամադրվում են ծրագրի սահմաններում ուսումնա-

		ռությանը նպաստող օգտակար ու մատչելի տեղեկատվություն և խորհրդատվություն, **գ.** ՄԿԾ-ն ապահովված է իր բովանդակությանը համապատասխան ուսումնամեթոդական անհրաժեշտ բազայով:

2.7 Որակի ապահովումը

N	Չափանիշը	Չափորոշիչները
7.	ՄԿԾ-ի շրջանակում առկա է որակի ներքին համակարգ, որն ապահովում է ՄԿԾ-ի որակի կայունությունը և շարունակական զարգացումը:	**ա.** որակի ապահովման ներքին համակարգը մշակված է և գործում է՝ հասարակության կարիքներին և ուսանողների պահանջներին հետևելու, ինչպես նաև իր գործունեությունը գնահատելու համար, **բ.** ՄԿԾ-ի շրջանակում առկա են որակի ներքին ապահովման արդյունավետ քաղաքականություն և ընթացակարգ (ընթացակարգեր), **գ.** ՄԿԾ-ի շրջանակում հետադարձ կապի մեխանիզմներով հավաքագրվում է իրականացվող գործընթացների մասին հավաստի տեղեկատվություն, որը վերլուծվում է ծրագրի նպատակների և գործըն-

		թացների բարելավման համար, **դ.** ՄԿԾ-ի ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ներքին ապահովման գործընթացներում, **ե.** ՄԿԾ-ի շրջանակում իրականացվում է օրինակելի փորձի տարածում:

3. Մասնագիտական ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ կարողությունների կամ մասնագիտության կրթական ծրագրի կատարողականի գնահատում

Հավատարմագրման չափանիշներն ու չափորոշիչները ենթադրում են յուրաքանչյուր չափանիշի համար հստակ ներկայացված եզրակացության երկու տարբերակ՝ «**այո**» կամ **«ոչ»: «Այո»** կամ **«ոչ»** որոշումը կայացնում է Հավատարմագրման հանձնաժողովը հավատարմագրման ողջ գործընթացի ավարտից հետո:

Ընդհանուր առմամբ, Հավատարմագրման հանձնաժողովը վերջնական որոշում կայացնելիս պետք է տա հետևյալ երեք հիմնական հարցերի պատասխանները.

- Արդյո՞ք յուրաքանչյուր չափանիշի վերաբերյալ կան բավարար տեղեկություններ: Ուրիշ ի՞նչ տեղեկություններ են անհրաժեշտ օբյեկտիվ եզրակացություն անելու համար:
- Ինչպիսի՞ն են հաստատության զարգացման հիմնական միտումները: Որո՞նք են յուրաքանչյուր միտումի համար առանձնացված հիմքերը:

- Որո՞նք են յուրաքանչյուր չափանիշի՝ **«այո»** կամ «**ոչ**» պատասխանի համար անհրաժեշտ փաստարկները:

Փորձագիտական խմբի անդամները, իրենց հերթին, պետք է՝

- Իրականացնեն իրավիճակի խորը վերլուծություն, ինչպես նաև տրամադրեն յուրաքանչյուր չափորոշիչի և չափանիշի վերաբերյալ հիմքեր,
- Ներկայացնեն յուրաքանչյուր չափանիշով գնահատվող ոլորտի զարգացման հիմնական միտումները՝ ապահովելով անհրաժեշտ հիմքեր՝ **«այո»** կամ **«ոչ»** պատասխան տալու համար,
- ներկայացնեն ապագա զարգացումների վերաբերյալ իրենց պատկերացումները (Ի՞նչ եք կարծում, ինչպիսի՞ զարգացումներ են հնարավոր ապագայում: Ներկայացնել համապատասխան հիմքերը): Արդյո՞ք վստահ եք, որ ապագայում զարգացումները և բարելավումները հնարավոր են: Ո՞ր հիմքերն են առաջացրել այդպիսի վստահություն:
- ներկայացնեն դատողություններ՝ արդյոք իրավիճակը տալիս է հնարավորություն՝ կատարելու «այո» կամ «ոչ» եզրակացություն:

Հիմնվելով փորձագիտական խմբի զեկույցի վրա՝ Հավատարմագրման հանձնաժողովը պետք է որոշում կայացնի, թե արդյոք ներկայացված հիմքերը և փաստարկները բավարար են՝ **«այո»** կամ **«ոչ»** եզրակացություն կայացնելու համար: Հավատարմագրման մասին որոշումը կայացվում է հավատարմագրման հանձնաժողովի անդամների կողմից բաց քվեարկության միջոցով:

V. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ, ՈՒՂԵՆԻՇՆԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Որակի արտաքին ապահովման՝հավատարմագրման, գործընթացների իրականացման համար ՈԱԱԿ-ն օգտվելու է բարձրակարգ փորձագետների ծառայություններից, ովքեր կիրականացնեն նախնական դիտարկումներ, կկատարեն այցեր հաստատություն և արդյունքների հիման վրա կներկայացնեն փորձագիտական զեկույց:

Արտաքին փորձագետների ընտրությունը կարևորագույն խնդիրներից է, քանի որ հավատարմագրման որոշումների ճանաչումը մեծապես կախված է ընտրության չափանիշների պահպանումից և սահմանված ընթացակարգերի (որտեղ ներգրավված են արտաքին փորձագետները) իրականացումից: «Հավատարմագրման եվրոպական կոնսորցիումն» (ՀԵԿ) (2005թ.) առանձնացրել է փորձագետների ընտրության հետևյալ սկզբունքները՝

- Փորձագիտական խմբի ձևավորման վերաբերյալ ցանկացած որոշում հիմնվում է հավատարմագրում իրականացնող կազմակերպության սահմանած կարգերի, ընթացակարգերի և այլ համապատասխան օրենսդրական ակտերի վրա: Ընտրությունը պետք է լինի թափանցիկ:
- Հավատարմագրման ենթակա հաստատությունները կամ այլ միավորները կարող են ներկայացնել իրենց առարկությունները փորձագետների ընտրության վերաբերյալ:
- Հավատարմագրման մասին որոշումները կայացվում են ոչ թե փորձագիտական խմբերի, այլ հավատարմագրում իրականացնող կազմակերպության կողմից:

- Փորձագետները պետք է լինեն անկախ և կատարեն անկողմնակալ դատողություններ:
- Փորձագետները պետք է աշխատեն միասնական և իրականացնեն հավատարմագրման նպատակին համապատասխան փորձաքննություն:

Այսպիսով, ՈԱԱԿ-ի փորձագետների ընտրության չափանիշները և համապատասխան գործընթացները պետք է համահունչ լինեն ՀԵԿ-ի սահմանած չափորոշիչներին:

Փորձագիտական խմբում ընդգրկված բոլոր մասնագետները և ուսանողներն ընտրվում են ՈԱԱԿ-ի փորձագետների բազայից: Բազայում հավաքագրված են բարձր մասնագիտական որակներ ունեցող, անվանի, տեղացի և միջազգային փորձառու մասնագետներ, ովքեր արդեն հմտացած են որակի ապահովման գործընթացներ իրականացնելու մեջ: Փորձագետներն ընտրվում են՝ հաշվի առնելով նրանց՝ գրավոր և բանավոր հաղորդակցվելու, հանդիպումներ, ֆոկուս խմբեր անցկացնելու, մեծ քանակությամբ տեղեկություններ վերլուծելու կարողությունները, ինչպես նաև անձնային այնպիսի հատկությունները, որոնք թույլ կտան ապահովել անկողմնակալ և օբյեկտիվ գնահատում:

ՈԱԱԿ-ը կանցկացնի փորձագիտական խմբի անդամների և ՈԱԱԿ-ի կողմից նշանակված համակարգողի վերապատրաստումներ՝ վերոնշյալ հմտությունները գործընթացում կիրառելու համար:

ՈԱԱԿ-ի պաշտոնական կայքի միջոցով հանրությանը հասանելի կլինի փորձագետների հավաքագրման, ընտրության, վերապատրաստման և զարգացման քաղաքականությունը:

ՈԱԱԿ-ը պետք է երաշխավորի հավատարմագրման ենթակա ուսումնական հաստատությանը, որ արտաքին գնահատման գործընթացները կլինեն օգտակար և արդյունավետ՝

- վստահեցնելով, որ գնահատում իրականացնող խմբի անդամներն անցել են համապատասխան վերապատրաստում՝ աշխատանքներն արհեստավարժ և վստահ իրականացնելու ուղղությամբ,
- ապահովելով ուսումնասիրության յուրաքանչյուր մեթոդի հետևողական կիրառումը,
- ապահովելով հաստատության՝ ինքնավերլուծություն իրականացնող խմբին տրված ուսումնասիրության մեթոդների կիրառման արդյունքների մասին արձագանքների հստակ և հասկանալի լինելը:

1. Փորձագիտական խմբի ձևավորում

Փորձագիտական խումբը ձևավորվում է հավատարմագրման նպատակով ՈԱԱԿ-ին դիմած ուսումնական հաստատության, նրա ենթակառույցների, գործընթացների, առանձին կրթական ծրագրերի արտաքին գնահատում իրականացնելու և ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովին փորձագիտական զեկույց տալու համար:

Փորձագիտական խմբերը հիմնականում ձևավորվում են ՈԱԱԿ-ի կողմից վարձված և վերապատրաստում անցած շահակիցներից, ովքեր ունեն համապատասխան որակավորումներ և հետաքրքրված են մասնագիտական ուսումնական հաստատությունների որակով:

Փորձաքննությանը մասնակցում է նաև ՈԱԱԿ-ի աշխատակիցը՝ որպես գործընթացի համակարգող:

Համակարգողը, խորհրդակցելով ՈԱԱԿ-ի տնօրենի հետ, պատասխանատու է փորձագետների թեկնածուների առաջադրման համար, բացառությամբ ուսանող-ներկայացուցչի առաջադրումից: Վերջինիս առաջադրում են ուսանողական կազմակերպությունները:

Փորձագիտական խմբի նախնական կազմը համաձայնեցվում է ուսումնական հաստատության հետ՝ Հավատարմագրման կարգով սահմանված ընթացակարգով:

Ուսումնական հաստատությունը գրավոր հավաստում է իր համաձայնությունը փորձագիտական խմբի նախնական կազմի վերաբերյալ: Փորձագիտական խմբի անդամներից մեկի կամ մի քանիսի թեկնածությունների վերաբերյալ առարկությունների դեպքում ուսումնական հաստատությունը ներկայացնում է հիմնավորված գրավոր բացարկ:

Հավատարմագրման նպատակից ելնելով՝ ՈԱԱԿ-ը ձևավորում է երկու տեսակի փորձագիտական խումբ՝ ***ենթակառուցվածքային հավատարմագրման*** *և* ***ծրագրային հավատարմագրման*** *համար:* Երկու տեսակի խմբերում էլ ներգրավված փորձագետները պետք է ունենան համապատասխան իրավասություններ ստորև նշված ոլորտներից առնվազն մեկում՝

- ծրագրային կամ ինստիտուցիոնալ գնահատում,
- ծրագրերի մշակում և մոնիթորինգ,
- քաղաքականության և ընթացակարգերի մշակում,
- կրթության կառավարում, որակի ապահովում,
- գնահատման ենթակա համապատասխան ոլորտի իմացություն:

Փորձագիտական խմբում կարող են լինել 5-ից 7 փորձագետներ:

Խմբում ներգրավված մեկ փորձագետ ընտրվում է միջազգային որակի ապահովման հեղինակավոր կազմակերպության փորձագետների բազայից:

Փորձագիտական խումբը ձևավորվում է ՈԱԱԿ-ի կողմից հաստատության ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրման ինքնավերլուծությունը ընդունելուց հետո:

Փորձագիտական խումբը ձևավորվում է.

- պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներից, ովքեր ունեն՝
  - մասնագիտական փորձ,
  - մասնագիտական ոլորտում ծավալած գործունեություն,
  - հավատարմագրման կամ գնահատման փորձ, համալսարանական մակարդակում դիդակտիկ իրավասություններ, միջազգային փորձ (հաստատության կառավարման փորձը ցանկալի է),
  - դասավանդման կամ գնահատման միջազգային փորձ,
  - մեթոդաբանության փորձ,
  - ի հավելումն՝ նաև մասնակցություն հավատարմագրման կամ փորձաքննության վերաբերյալ վերապատրաստումներին.
- մասնագիտական կամ տնտեսության տվյալ ոլորտի ներկայացուցիչներից, ովքեր ունեն՝
  - մասնագիտական փորձ,
  - աշխատանքի ընդունելու և շրջանավարտների հետ աշխատելու փորձ (մարդկային ռեսուրսների կառավարման կարողություն),
  - հավատարմագրման կամ գնահատման փորձ, միջազգային փորձ, (հաստատության կառավարման փորձը ցանկալի է),
  - ի հավելումն՝ նաև մասնակցություն հավատարմագրման կամ փորձաքննության վերաբերյալ վերապատրաստումներին,
  - նախկինում ուսանելու փորձ ծրագրային կամ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնող հաստատությունում (շրջանավարտ)
- ուսանողներից, ովքեր
  - սովորում են բարձր կուրսերում և ունեն հասարակական գործունեության փորձ,
  - մասնակցել են հավատարմագրման կամ փորձաքննության վերաբերյալ վերապատրաստումներին,

- կրթության կառավարման ոլորտի ներկայացուցիչներից, ովքեր ունեն `
  - մասնագիտական փորձ,
  - հավատարմագրման կամ գնահատման փորձ,
  - միջազգային փորձ,
  - հաստատության կառավարման փորձ,
  - հավատարմագրման կամ փորձաքննության վերաբերյալ վերապատրաստումներին մասնակցության փորձ:

Հատուկ պահանջներ ծրագրային հավատարմագրում իրականացնող փորձագիտական խմբին.

- Բարձրագույն ուսումնական հաստատությունների փորձագետների համար գիտական աստիճանի և/կամ գիտական կոչման առկայություն:
- Փորձագիտական խմբի անդամներից առնվազն մեկը պետք է լինի միջազգային փորձագետ:
- Միջին մասնագիտական հաստատությունների փորձագետների համար՝ մագիստրոսի կրթական աստիճանի առկայություն:

Հատուկ պահանջներ ինստիտուցիոնալ հավատարմագրում իրականացնող փորձագիտական խմբին.

- Բարձրագույն ուսումնական հաստատությունների փորձագետների համար գիտական աստիճանի և/կամ գիտական կոչման առկայություն:
- Միջին մասնագիտական հաստատությունների փորձագետների համար մագիստրոսի կրթական աստիճանի առկայություն:
- Փորձագիտական խմբի անդամներից առնվազն մեկը պետք է ունենա հաստատության կառավարման փորձ:

- Փորձագիտական խմբի անդամներից առնվազն մեկը պետք է լինի միջազգային փորձագետ:
- Խմբում պետք է ընդգրկված լինի պետական ծառայության կամ աշխատաշուկայում փորձ ունեցող ներկայացուցիչ:

Լեզվի իմացություն

Տեղացի փորձագետները պետք է ունենան հայերենի (գրավոր և բանավոր) գերազանց իմացություն: Փորձագիտական խմբի տեղացի անդամներից մեկը պետք է տիրապետի անգլերեն լեզվին:

Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների կիրառման հմտություններ և գիտելիքներ

Փորձագետները պետք է ունենան՝

- ՈԱԵՉՈՒ-ի վերաբերյալ խորը գիտելիքներ և դրանց կիրառման կարողություններ:
- ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների, չափորոշիչների, ընթացակարգերի և նրանց գործառման վերաբերյալ խորը գիտելիքներ:
- Գնահատման ՈԱԱԿ-ի մեթոդների վերաբերյալ խորը գիտելիքներ:
- Գրավոր և բանավոր հաղորդակցվելու, հանդիպումներ, ֆոկուս խմբեր կազմակերպելու, ծավալուն տեղեկատվությունը վերլուծելու կարողություններ:
- Փորձագետները պետք է կարողանան ճիշտ մեկնաբանել և կիրառել չափանիշները՝ կախված իրավիճակներից:

Փորձագետների ընտրության սկզբունքները

Նախքան փորձագիտական խմբի կազմի հաստատումը դիմող կազմակերպությունը տեղեկացվում է այդ կազմի մասին: Դիմող կազմակերպությունը կարող է պահանջել կազմի փոփոխություն կողմնա-

կալության կասկածի պատճառով: Այդպիսի պահանջը ընդունելի է միայն հետևյալ պայմանների դեպքում՝

- որակավորման անհամապատասխանություն,
- փորձի անհամապատասխանություն,
- շահերի բախում:

Մինչև փորձագիտական խմբում ընդգրկվելը յուրաքանչյուր փորձագետ պարտավոր է ՈԱԱԿ-ին գրավոր տեղեկացնել տվյալ ուսումնական հաստատության հետ շահերի բախմանը հանգեցնող ցանկացած խնդրի մասին և ստորագրել շահերի բախումը բացառող հավաստագիր: Փորձագիտական խմբում ընդգրկվելուց հետո պետք է ստորագրել գաղտնիության և անկողմնակալության մասին պարտավորագիրը:

Փորձագիտական խումբն իրականացնում է ուսումնասիրություն՝ հիմնվելով ՈԱԱԿ-ի սահմանած պահանջների և ընթացակարգային սկզբունքների վրա: Նախքան այցը բոլոր փորձագետներին տրամադրվում է լրացուցիչ օժանդակություն:

Փորձագիտական խմբերը պարտավոր են՝

- նախքան փորձագիտական այցը ուսումնասիրել և գնահատել ուսումնական հաստատության ներկայացրած ինքնավերլուծությունը և փաստաթղթերը,
- կատարել փորձագիտական այց,
- մասնակցել վերջնական զեկույցի պատրաստման աշխատանքներին՝ հիմնվելով ներկայացված ինքնավերլուծության նախնական դիտարկումների և փաստաթղթերի ուսումնասիրությունների, ինչպես նաև այցի արդյունքների վրա,
- ուսումնասիրել փաստաթղթերի համապատասխանությունը ներկայացվող պահանջներին,

- Հավատարմագրման հանձնաժողովին ներկայացնել փորձագիտական զեկույցը և առաջարկվող որոշումը,
- ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի պահանջով տրամադրել անհրաժեշտ տվյալներ:

1.1 Փորձագիտական խմբի անդամների և համակարգողի պարտականությունները

Դերերի և պարտականությունների ճիշտ բաշխումը երաշխավորելու նպատակով՝ ստորև հակիրճ ներկայացվում են փորձագիտական խմբի անդամների, ինչպես նաև համակարգողի դերն ու պարտականությունները:

1.1.1 Համակարգողի դերը

Համակարգողը ապահովում է փորձագիտական խմբի և մասնագիտական ուսումնական հաստատության միջև կապը և հանդես է գալիս որպես հավատարմագրման մեթոդաբանության պահպանման երաշխիք: Համակարգողը չի տալիս գնահատականներ, չի կատարում դատողություններ հաստատության գործունեության կամ մասնագիտության կրթական ծրագրի մասին: Համակարգողը պարտավոր է՝

- հետևել գործընթացի սահուն ընթացքին և արդյունավետ իրականացմանը (քննարկումների անցկացում, կազմակերպում, ոչ ամբողջական ընկալման կարգավորում),
- պատրաստել վերջնական փորձագիտական զեկույցը,
- համակարգել ողջ գործընթացը և պաշտպանել փորձագիտական խմբի անդամների իրավունքները,
- կատարել իրավիճակի վերլուծություն, չպլանավորված դեպքերում որոշումներ կայացնել և լուծումներ տալ,

- ապահովել փորձագիտական խմբի աշխատանքների և իրականացվող գործընթացների որակը:

Հատուկ դեպքերում ինստիտուցիոնալ հավատարմագրման ժամանակ հնարավոր է, որ գործընթացը համակարգեն միաժամանակ երկու համակարգող:

Համակարգողը պետք է տեղյակ լինի, թե փորձագիտական խմբի յուրաքանչյուր անդամ որ ուղղությամբ է մտածում: Փորձագիտական խմբի յուրաքանչյուր անդամ վերջին հանդիպումից հետո պետք է ունենա անհատական հաշվետվության համառոտ բովանդակությունը՝ ներառյալ նախնական արդյունքները և դիտողությունները: Այստեղ պետք է նշվեն նաև այն հիմնական կետերը, որոնք հետագայում անհրաժեշտ է քննարկել փորձագիտական խմբի հետ: Փորձագիտական այցի վերջում համակարգողը պետք է ունենա այն հիմնարար փաստաթղթերի ցանկը, որոնք անհրաժեշտ կլինեն վերջնական զեկույցի պատրաստման ժամանակ: Համակարգողը պետք է ունենա նաև բոլոր փորձագետների նշումները:

1.1.2 Փորձագիտական խմբի ղեկավարի դերը

- իրականացնել փաստաթղթերի նախնական ուսումնասիրություն,
- իրականացնել փորձագիտական այց,
- ղեկավարել հանդիպումները,
- իրականացնել կազմակերպչական աշխատանքներ,
- փորձագետների միջև կատարել աշխատանքների բաշխում,
- հետևել ժամանակացույցին (հետևել հանդիպումների ժամանակին, բոլոր փորձագետների կողմից հարցերը ներկայացնելուն և դրանց առաջադրվելուն):

Համակարգողի աջակցությամբ փորձագիտական խմբի ղեկավարը պետք է՝

- մասնակցի փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ հաշվետվության պատրաստմանը,
- մասնակցի վերջնական զեկույցի պատրաստմանը,
- հետևի գործընթացի մեթոդաբանությանը:

1.1.3 Փորձագիտական խմբի անդամի դերը

- իրականացնել փաստաթղթերի նախնական ուսումնասիրություն,
- իրականացնել փորձագիտական այց,
- մասնակցել փորձագիտական այցի բոլոր հանդիպումներին, փակ քննարկումներին և որոշումների կայացման գործընթացին,
- այցի ընթացքում ներկայացնել խմբի ղեկավարի և համակարգողի կողմից իրեն հանձնարարված հարցադրումները,
- խմբի ղեկավարին ներկայացնել փորձաքննության արդյունքների մասին անհատական հաշվետվություն՝ ըստ ՈԱԱԿ-ի հաստատած ձևաչափի:

Փորձագետներին թույլ չի տրվում իրենց տպավորությունները ներկայացնել կամ ինքնուրույն բացահայտումներ կատարել: Փորձագետները չպետք է օգտագործեն հետևյալ տերմինները՝ բավարար, անբավարար, լավ կամ վատ:

2. Փորձագետների հատկանիշները

Փորձագետը պետք է՝

- լինի ազատամիտ և փորձառու, ինչպես նաև պատրաստակամ՝ ընդունելու տարբեր գաղափարներ և տեսակետներ,

- ունենա հստակ դատողություններ կատարելու կարողություն, վերլուծական հմտություններ,
- ունենա տարբեր իրավիճակներին իրատեսական գնահատական տալու ունակություն՝ հասկանալով բարդ գործառույթները և հաստատության բաղկացուցիչ միավորների դերերը,
- ունակ լինի տարբերակելու առավել կարևոր դրույթները քիչ կարևորներից,
- լինի արդար, անկեղծ, ազնիվ և խոհեմ,
- լինի դիվանագետ. նրբանկատորեն կարողանա հաղորդակցվել մարդկանց հետ,
- լինի ուշադիր, քաջատեղյակ շրջապատում կատարվող գործողությունների և սովորույթների վերաբերյալ,
- լինի համառ և նպատակասլաց,
- կարողանա կայացնել որոշումներ, կատարել խոհեմ եզրակացություններ և վերլուծություններ,
- լինի ինքնավստահ, գործի անկախ՝ արդյունավետորեն համագործակցելով մյուսների հետ:

Փորձագետները պետք է ունենան վերոնշյալ հատկությունները, որպեսզի՝

- կարողանան հավաքել հավաստի տվյալներ և հիմքեր,
- մնան հավատարիմ գնահատման նպատակներին,
- պարբերաբար գնահատեն գործընթացի ազդեցությունը և մարդկային հարաբերությունները,
- համագործակցեն անձնակազմի հետ այնպես, որ հասնեն գնահատման հիմնական նպատակներին,
- իրականացնեն գնահատման գործընթացը առանց շեղումների,
- ճիշտ արձագանքեն լարված իրավիճակներին,

- հանգեն համընդհանուր ընդունելի եզրակացությունների՝ հիմնվելով գնահատման ընթացքում հավաքագրած հավաստի տեղեկատվության վրա,
- հավատարիմ մնան իրենց կատարած եզրակացությանը, եթե նույնիսկ իրենց վրա ճնշում է գործադրվում՝ փոխելու այդ եզրակացությունները՝ առանց օբյեկտիվ հիմնավորումների:

3. Փորձագետների հավաքագրում, ընտրություն

Հուսալի և իրավասու փորձագետներ (միջազգային և ազգային) հավաքագրելու նպատակով ՈԱԱԿ-ը ստեղծել է փորձագետների տվյալների բազա, որը հասանելի է ՈԱԱԿ-ի պաշտոնական վեբ-կայքում (http://experts.anqa.am): Հնարավոր փորձագետների թեկնածուները կարող են լրացնել պահանջվող տվյալները և կցել իրենց ինքնակենսագրությունները:

Հիմնվելով փորձագետների բազայի վրա՝ համակարգողը գործընթացի համար ընտրում է համապատասխան թեկնածուներին և այնուհետև ձևավորում փորձագիտական խմբի նախնական կազմը:

Փորձագետի իրավասությունները գնահատվում են՝ հաշվի առնելով նրանց մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, ինչպես նաև անձնային հատկանիշները: ՈԱԱԿ-ը կարող է կիրառել տարբեր մեթոդներ փորձագետի իրավասությունները գնահատելու համար: Այս մեթոդները կկիրառվեն համապատասխան համակցությամբ՝ համոզվելու, թե արդյոք փորձագետը բավարարում է անհրաժեշտ պահանջներին: Փորձագետների գնահատումը հիմնականում կատարվում է հետևյալ կերպ.

- **Փորձարկող/վերապատրաստող գնահատում:** Հնարավոր է հարցազրույցների անցկացում կամ էսսեների ընդունում ՈԱԱԿ-ի

պահանջներին փորձագետների գիտելիքների և հմտությունների համապատասխանությունը ստուգելու նպատակով:

- **Դիտարկում:** Փորձագետների հմտությունների դիտարկում, օրինակ՝ ֆոկուս խմբերի միջոցով:
- **Պաշտոնական գնահատում:** Հենց գնահատման ընթացքում փորձագետի գործողությունների դիտարկում:
- **Պատահական դիտարկում:** Փորձագետի գործողությունների չպլանավորված և ոչ պաշտոնական դիտարկում: Այս դիտարկումը հնարավոր է կատարել հենց գնահատման ընթացքում կամ այլ իրավիճակներում, որտեղ հնարավոր կլինի տեսնել փորձագետի՝ գնահատում կատարելու հմտությունները և անձնային հատկանիշները:
- **Փաստաթղթերի ուսումնասիրություն**: Ամբողջ տեղեկատվության, օրինակ՝ ինքնակենսագրությունների, վերապատրաստումների վկայականների, այլ վկայականների և մասնագիտական լիցենզիաների ուսումնասիրություն:
- **Նախորդ աշխատանքի ուսումնասիրություն:** Փորձագետների զեկույցների, լրացված հարցաշարերի, գնահատման պլանների և նման այլ փաստաթղթերի ուսումնասիրություն:
- **Հարցազրույց:** Հարցազրույցները կարող են անցկացվել մի կամ մի քանի անձանց կողմից: Հարցազրույցները անցկացվում են այլ աղբյուրներից ստացված փաստերը ստուգելու համար:

4. Փորձագետների կողմնորոշում/վերապատրաստումներ

Բոլոր փորձագետներն ընտրվելուց և իրենց թեկնածությունները ՄՈՒՀ-ի հետ համաձայնեցնելուց հետո կանցնեն ծավալուն վերապատրաստում/փորձաշրջան:

4.1 Նախնական վերապատրաստում

ՈԱԱԿ-ը նախնական վերապատրաստման միջոցով մասնակիցների մոտ վստահություն կառաջացնի առաջին գնահատումը կատարելու համար: Եթե առաջին մի քանի գնահատումների ժամանակ փորձագետը պատշաճ կերպով հանդես չի գալիս, ապա նա հետագայում այլևս չի ընդգրկվում խմբում, կամ, եթե խնդիրը տեխնիկական բնույթի է, մասնակցում է լրացուցիչ վերապատրաստումների կամ ստանում հավելյալ խորհրդատվություն:

Փորձագիտական խմբի յուրաքանչյուր անդամ ՈԱԱԿ-ից ակնկալում է՝

- ստանալ տեղեկատվություն ՈԱԱԿ-ի գործունեության, առաքելության, հավատարմագրման չափանիշների մասին,
- վերապատրաստվել՝ ձեռք բերելով անհրաժեշտ մասնագիտական հմտություններ որակի ապահովման գործընթացներ իրականացնելու համար. փորձագիտական խմբի անդամների համար այն ներառում է գնահատմանն օժանդակելու համար ստեղծված էլեկտրոնային հաղորդակցական համակարգերի արդյունավետ օգտագործումը,
- ստանալ օժանդակություն՝ ձեռք բերելու բավարար վստահություն առաջին գնահատումը իրականացնելու համար,
- վերապատրաստումից հետո ստանալ վերապատրաստման նյութեր՝ հետագայում օգտագործելու համար,
- ստանալ արտաքին գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը,
- ունենալ հնարավորություն էլեկտրոնային փոստով ստանալու ՈԱԱԿ-ի նոր հրատարակումները և կենտրոնի վերաբերյալ տեղեկատվությունը,

- ստանալ հնարավորություն ներդրում ունենալու մեթոդների գնահատման գործում:

Նախնական վերապատրաստման հաջող ավարտի դեպքում ՈԱԱԿ-ը.

- հետադարձ կապի միջոցով կտեղեկացնի փորձագիտական խմբին իրենց կատարած աշխատանքների մասին և կուղղորդի նրանց՝ աշխատանքների հետագա զարգացման համար,
- կխրախուսի խմբի յուրաքանչյուր անդամին՝ շարունակելու իրականացնել նման գործունեություն:

4.2 Շարունակական վերապատրաստում

ՈԱԱԿ-ը փորձագետների համար նաև անցկացնում է վերապատրաստումներ՝ նրանց տեղեկացնելով նոր կամ վերամշակված ընթացակարգերի և պահանջների մասին, ինչ- պես նաև հնարավորություն տալով իրականացնել փորձի փոխանակում: Այս նպատակով ՈԱԱԿ-ը կկազմակերպի հանդիպումներ փորձագետների համար, իսկ անհրաժեշտության դեպքում տեխնիկական փորձագետների համար կանցկացնի քննարկումներ՝ որոշակի ոլորտներում խնդրահարույց թեմաներին անդրադառնալու համար: Սա կնպաստի գնահատման հետևողականությանը և որակի ապահովման գործընթացների բարելավմանը: Նմանատիպ վերապատրաստումները կկրեն պարբերական բնույթ: ՈԱԱԿ-ը պարտադիր է համարում այն, որ փորձագետները շարունակաբար մասնակցեն պարբերաբար անցկացվող վերապատրաստումներին՝ արդեն ձեռք բերած փորձագետի կարգավիճակը պահպանելու համար:

5. Փորձագիտական աշխատանքների մշտադիտարկում և գնահատում

Շատ կարևոր է ապահովել գնահատման պատշաճ իրականացումը: ՈԱԱԿ-ի որակի ապահովման գործընթացների հաջող ընթացքն ապահովելու համար պարբերաբար կիրականացվեն մշտադիտարկումներ, և կգնահատվեն փորձագիտական խմբի աշխատանքները: Այս նպատակով ՈԱԱԿ-ն ունի հստակ ծրագիր և մշակել է ընթացակարգեր փորձագետների աշխատանքների թե՛ նախնական, թե՛ ընթացիկ գնահատման ու մշտադիտարկման համար:

5.1. Նախնական գնահատում

Նոր փորձագետների աշխատանքները կմշտադիտարկվեն և կգնահատվեն ՈԱԱԿ-ի փորձառու անձնակազմի կամ փորձագետների կողմից: Գնահատումը կիրականացվի ՈԱԱԿ-ի քաղաքականությունն ու ընթացակարգերը արտացոլող չափորոշիչներով: Փորձագետների աշխատանքները գնահատելիս կօգտագործվեն նաև փորձագետների զեկույցների ուսումնասիրությունները, փորձաքննություն անցած ուսումնական հաստատություններից ստացված կարծիքները:

5.2 Շարունակական գնահատում և մշտադիտարկում

ՈԱԱԿ-ը մշտադիտարկում կիրականացնի նաև փորձագետների ընթացիկ աշխատանքների վերաբերյալ հետևյալ ձևերով.

- **Ֆորմալ դիտարկում**: ՈԱԱԿ-ի որակավորված անձնակազմը տեղում ուսումնասիրում և զեկույց է կազմում փորձագետների աշխատանքների վերաբերյալ, ինչպես նաև տրամադրում է խորհրդատվություն բարելավման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու

համար: Բոլոր փորձագետների աշխատանքների վերաբերյալ պարբերաբար դիտարկում կիրականացվի՝ առնվազն երեք տարին մեկ կամ ավելի հաճախ:

- **Փորձագետների հաշվետվությունների ուսումնասիրություն:** ՈԱԱԿ-ի անձնակազմը կստուգի փորձագետների անհատական հաշվետվությունները և լրացված փաստաթղթերը տարբեր միջոցներով, ինչպես օրինակ՝ նախնական գնահատման հարցաշարերի միջոցով, որպեսզի համոզվի, որ ապահովված են տրված պահանջներին համապատասխանությունը, այցերի ընթացքում ձեռք բերված հիմքերը և գրելու հստակությունը: Նման ստուգումները հաճախակի կիրականացվեն և կծառայեն որպես փաստաթուղթ փորձագետի հետ հետադարձ կապն ապահովելու համար:
- **Հաստատություններից կարծիքների հավաքագրում:** Հաստատություններից գրավոր կամ բանավոր կարծիքների հավաքագրումը փորձագետների աշխատանքների գնահատմանն օժանդակող միջոցներից մեկն է: Այն կիրականացվի պարբերաբար և կծառայի որպես փաստաթուղթ:
- **Խմբի անդամների կարծիքների հավաքագրում:** Գործընկեր փորձագետներից գրավոր կամ բանավոր արձագանքների (միջնորդավորված կամ ուղղակի) հավաքագրումը ևս կարևոր գործիք է փորձագետի աշխատանքի գնահատման համար, ինչը հնարավոր է դարձնում փորձագետի մասին ամբողջական գնահատական տալը, քանի որ տվյալ դեպքում տարբեր կարծիքներ են դիտարկվում:
- **Պատահական դիտարկում:** Այսպիսի դիտարկում կարող է տեղի ունենալ փորձաքննության իրականացման ժամանակ կամ այլ իրավիճակներում, ինչպես օրինակ՝ խմբակային հանդիպումների, վերապատրաստումների ընթացքում, որտեղ կարելի է դիտարկել գնահատման հմտությունները կամ անձնային հատկանիշները:

6. Շահերի բախում, գաղտնիություն և ազնվություն

Նախքան հստակ առաջադրանք ստանալը, փորձագետը պետք է ՈԱԱԿ-ին գրավոր տեղեկացնի տվյալ ուսումնական հաստատության հետ շահերի բախմանը հանգեցնող ցանկացած խնդրի վերաբերյալ և ստորագրի շահերի բախումը բացառող հավաստագիր: ՈԱԱԿ-ը մշակել է շահերի բախումից խուսափելու հստակ քաղաքականություն հավատարմագրման գործընթացներում ներգրավված փորձագետների համար: Շահերի բախում կարելի է համարել, եթե փորձագետը.

- ունի որևէ ազգակցական, ֆինանսական կամ նմանատիպ այլ կապեր տվյալ ուսումնական հաստատության կամ նրա ղեկավար կազմի հետ, որոնք թույլ չեն տա նրան կատարել անկողմնակալ, անկախ դատողություններ,
- իրականացնում է որոշակի գործառույթներ հավատարմագրման ենթակա ուսումնական հաստատությունում,
- ունի սերտ համագործակցություն տվյալ հաստատության հետ:

Գաղտնիություն: Փորձագետները պետք է ստորագրեն գաղտնիությունն ապահովող պարտավորագրեր՝ երաշխավորելով, որ գնահատվող հաստատության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն պետք է գաղտնի պահվի և չբացահայտվի մինչև հաստատության կողմից թույլտվություն ստանալը: Սակայն, եթե օրենքը պահանջում է տեղեկատվության հրապարակում, ապա այն կիրականացվի առանց թույլտվության:

Ազնվություն: ՈԱԱԿ-ը միջոցառումներ կձեռնարկի՝ երաշխավորելու, որ փորձագետները չեն ենթարկվի անհարկի ազդեցության կամ ճնշման, ինչը կխոչընդոտի ազնիվ գործելուն:

Անկողմնակալություն: Փորձագետները պետք է գործեն օբյեկտիվ և չենթարկվեն ցանկացած ֆինանսական կամ կոմերցիոն ճնշ-

ման, ինչը կխոչընդոտի անկողմնակալ գործունեություն իրականացնելուն:

Խորհրդատվություն: ՈԱԱԿ-ը չի թույլատրում փորձագետներին հաստատությանը տրամադրել որևէ խորհրդատվություն:

VI. ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱԽՍԵՐ

Հավատարմագրման կարգի համաձայն՝ մասնագիտական ուսումնական հաստատությունն է հոգում հավատարմագրման ողջ գործընթացի ծախսերը՝ ՄՈՒՀ-ի և ՈԱԱԿ-ի միջև կնքվող ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի համաձայն:

Արտաքին գնահատման /հավատարմագրման/ հետ կապված ծախսերը սահմանում է ՈԱԱԿ-ը՝ կախված գործընթացի տեսակից և տևողությունից, փորձագիտական խմբի անդամների քանակից և այլ պայմաններից: Արտաքին գնահատման ծախսերը հաշվարկվում են յուրաքանչյուր գործընթացի համար առանձին: Սակագները հաստատվում են ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից: